



ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ,
ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ԵՎ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ – ՓՈԻԼ 2» ԾՐԱԳԻՐ

«Նոր զբոսաշրջային երթուղի» ծրագրի շրջանակներում իրականացվող

«ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ 2024-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ»

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Վեդու համայնքապետարանի հետ համատեղ իրականացված հետազոտություն

Այս հաշվետվությունն իրականացվել է «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – Փուլ 2» ծրագրի շրջանակում: Սույն հաշվետվության մեջ տեղ գտած տվյալները, դատողությունները և առաջարկություններն արտահայտում են հետազոտության փորձագետների (Հակոբյան Դ., Հովհաննիսյան Հ., Ոսկանյան Ա.) և աշխատանքային թիմի կարծիքը, և չեն դիտարկվում որպես Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի պաշտոնական տեսակետ:

ՎԵՐԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐ
2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	4
Գծապատկերների և Աղյուսակների ցանկ	5
1. Գործադիր ամփոփագիր	6
2. Ներածություն	7
3. Զբոսաշրջության ներուժի վերլուծություն	9
3.1 Զբոսաշրջության ներկա վիճակը	9
.	
3.2 Զբոսաշրջային տեսարժան վայրեր	12
.	
3.3 Այցելուների ժողովրդագրություն և միտումներ	17
3.4 Մրցակցային առավելություններ	20
.	
4. Տնտեսական վերլուծություն	22
4.1 Զբոսաշրջության տնտեսական ազդեցությունը	22
4.2 Ներդրումային հնարավորություններ	23
4.3 Տնտեսական մարտահրավերներ	24
5. Բնապահպանական համագործակցություն	25
5.1 Կենսաբազմազանության պահպանություն և բնական ռեսուրսների կառավարում	25
5.2 Կլիմայական գործողություններ և աղետների ռիսկի նվազեցում	25
5.3 Ռեսուրսների արդյունավետություն և աղտոտման կանխարգելում	26
5.4 Ռիսկերի կառավարման մոտեցում	26
.	
5.5 Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում	27
5.6 Պահպանության նախաձեռնություններ	28
.	
5.7 Կայուն զբոսաշրջության պրակտիկա	28
.	
6. Համայնքային զարգացում	29
7. Համայնքային ներգրավվածությունը զբոսաշրջության զարգացման գործընթացներում	31

7.1 Որոշումների կայացման և զարգացման մեջ ներգրավվածություն	31
7.2 Կրթական և կարողությունների զարգացման գործունեություն	31
7.3 Բիզնես նախաձեռնությունների աջակցություն և ձեռներեցության խթանում	32
7.4 Շարունակական աջակցություն և համայնքային զբոսաշրջության նախաձեռնություններ	33
8. Մարքեթինգ և առաջխաղացում	33
8.1 Բրենդինգ և դիրքավորում	34
.	
8.2 Թիրախային շուկաներ և սեգմենտացիա	34
8.3 Խթանման ռազմավարություններ	34
.	
8.4 Շուկայավարման նյութեր և ալիքներ	36
9. Ենթակառուցվածքների զարգացում	36
9.1 Տրանսպորտ և մատչելիություն	36
9.2 Տեղավորում և հյուրընկալություն	36
.	
9.3 Այցելուների հարմարավետություն	37
10. Իրականացման ծրագրեր	38
10.1 Փուլային իրականացման ռազմավարություն	38
10.2 Կատարողականի հիմնական ցուցիչներ (KPI)	41
10.3 Ժամանակացույց և նշաձողեր	42
10.4 Շահագրգիռ կողմերի ներգրավվածություն	43
11. Մոնիտորինգ և գնահատում	43
11.1 Գնահատման շրջանակ	43
11.2 Հետադարձ կապի մեխանիզմներ	44
11.3 Շարունակական բարելավում	44
Եզրակացություն	45
Հավելվածներ	46
Հավելված 1 – Վեդիի մշակութային և արկածային երթուղի	46
.	
Հավելված 2 – Վեդիի արկածային երթուղի	50

Հավելված 3 – Վեդիի էկոտուրիզմի և ագրոտուրիզմի երթուղի	53
.	
Հավելված 4 – Արարատի մարզի գործարանների ցանկ	57
Հավելված 5 – Բնապահպանական և սոցիալական լավ պրակտիկաներ	59
Հավելված 6 – «Կանաչ» օրակարգի աջակցության ծրագրերի ցուցակ	62

Ն Ա Խ Ա Բ Ա Ն

«ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի զարգացման տեսլականը զբոսաշրջության խթանման միջոցով 2024-2028 թվականներին» հետազոտությունն իրականացավ է Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – Փուլ 2» ծրագրի շրջանակում:

«Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում – Փուլ 2» ծրագիրը նպատակ ունի աջակցելու եվրոպական չափանիշներին համապատասխան տեղական ինքնակառավարման վերանայված օրենսդրության ընդունմանը, որը կարտացոլի Հայաստանի նոր տարածքային-վարչական քարտեզը, ինչպես նաև զարգացնելու համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կարողությունները՝ ապահովելով նրանց կողմից նոր պարտականությունների և իրավասությունների ստանձնումը: Այն նաև միտված է լավ կառավարման սկզբունքների մասին իրազեկության բարձրացմանը, ինչպես նաև անդրսահմանային համագործակցության (այսուհետ՝ ԱՍՀ), միջհամայնքային համագործակցության (այսուհետ՝ ՄՀՀ) և տեղական մակարդակում տնտեսական զարգացման խթանմանը:

Համաձայն Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մաքսիմ Լոնգանի և Վեդի համայնքի ղեկավար Գարիկ Սարգսյանի միջև կնքված պայմանագրի սահմանված կարգի՝ վերոնշյալ ծրագրով իրականացվող «Նոր զբոսաշրջային երթուղի» ծրագրի շրջանակներում 2024թ. օգոստոսին մեկնարկել է «ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի զարգացման տեսլականը զբոսաշրջության խթանման միջոցով 2024-2028 թվականներին» հետազոտությունը:

Հետազոտության նպատակն է դիտարկել Վեդի համայնքի բնական, մշակութային ներուժը՝ որպես տնտեսության այլընտրանքային զարգացման միջոց, ինչը կենսակայուն միջավայր կձևավորի համայնքի և հարակից բնակավայրերի համար:

Հետազոտության նպատակի, խնդիրների, դրանց լուծումների ձևավորման նպատակով տեղի են ունեցել հանդիպումներ համայնքապետարանի և համայնքի ոլորտային տնտեսավարողների ներկայացուցիչների հետ:

Հետազոտության մեջ առավել ուշադրություն է դարձվել Վեդի համայնքի էկոզբոսաշրջության, արկածային, պատմամշակութային, գաստրո-զբոսաշրջության և ագրոզբոսաշրջության ներուժին, դրանց հեռանկարային զարգացման, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման հնարավորություններին: Մշակված առաջարկները փոխրացնող են Վեդի համայնքի զարգացման ընդհանուր տեսլականին, և դրանք ուղենիշ են հանդիսանում հաջորդ տարիների զարգացման ծրագրերի ձևավորման համար:

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԳԾԱՊԱՏԿԵՐ 1. Վեդիի ներուժին բնորոշ զբոսաշրջության զարգացման հնարավոր ուղղություններ
- ԳԾԱՊԱՏԿԵՐ 2. Վեդիում զբոսաշրջային ծառայությունների և հյուրընկալման զարգացման խոչընդոտները
- ԳԾԱՊԱՏԿԵՐ 3. Զբոսաշրջության հնարավոր բացասական ազդեցությունները շրջակա միջավայրի վրա
- ԳԾԱՊԱՏԿԵՐ 4. Կայուն զբոսաշրջության իրականացման համար անհրաժեշտ բաղադրիչներ
- ԳԾԱՊԱՏԿԵՐ 5. Համայնքի զբոսաշրջության ոլորտի խթանման հիմնական գործիքները
- ԳԾԱՊԱՏԿԵՐ 6. Համայնքում այցելուների հարմարավետության հիմնական երաշխիքները
- ԳԾԱՊԱՏԿԵՐ 7. Նախատեսվող միջոցառումների փուլային իրականացման ռազմավարություն

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

- ԱՂՅՈՒՍԱԿ 1. Արարատի մարզի հյուրանոցային տնտեսության օբյեկտներ
- ԱՂՅՈՒՍԱԿ 2. Վեդիում հիմնական այցելվող պատմամշակութային զբոսաշրջային վայրեր
- ԱՂՅՈՒՍԱԿ 3. Վեդիում հիմնական այցելվող բնության հետ կապված զբոսաշրջային վայրեր
- ԱՂՅՈՒՍԱԿ 4. Վեդի համայնքի զբոսաշրջության ոլորտի SWOT վերլուծություն
- ԱՂՅՈՒՍԱԿ 5. Զբոսաշրջության զարգացմանն ուղղված առանցքային գործողությունների ժամանակացույց

1. ԳՈՐԾԱԴԻՐ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ծրագրի նպատակների և խնդիրների ակնարկ.

«ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի զարգացման տեսլականը զբոսաշրջության խթանման միջոցով 2024-2028թթ.» հետազոտությունը նպատակ ունի կապիտալացնել համայնքի բնության ու պատմական հուշարձանների ռեսուրսները՝ ստեղծելով կայուն տնտեսական հնարավորություններ համայնքի բնակավայրերի համար և համայնքը դարձնել էկոզբոսաշրջության, արկածային, մշակութային, գաստրո զբոսաշրջության և ագրոզբոսաշրջության նախընտրելի վայր:

Հետազոտության արդյունքում ձևավորված առաջարկները ուղղագծում են Վեդի համայնքի զբոսաշրջային գրավչության, ինչպես նաև ներքին և ներգնա զբոսաշրջության հոսքերի ակտիվացման և զբոսաշրջիկների թվի ավելացման ճանապարհային քարտեզը՝ կենտրոնանալով տնտեսական աճի, շրջակա միջավայրի պահպանության, կայունության և մշակութային արժեքների պահպանման ու հանրայնացման վրա:

Հիմնական բացահայտումներ և առաջարկությունների շրջանակ.

- **Զբոսաշրջային ներուժ.** Վեդի համայնքի բնական և մշակութային արժեքների յուրահատուկ համադրությունը զբոսաշրջության զարգացման զգալի հնարավորություններ ունի: Ներկայիս հիմնական առաջարկները ներառում են Խոր Վիրապ վանական համալիրը, Տափի բերդը կամ Գևորգ Մարգարետունու ամրոցը, Հովհաննես Կարապետ վանական համալիրը և շուրջ 1700 տարվա վաղեմությամբ հարուստ կենսաբազմազանությամբ և մշակութային շերտեր ունեցող Խոսրովի անտառ պետական արգելոցը, Հրեշտակների ձորը և այլ այցելավայրեր: Այս տեսարժան վայրերը տարբերվող և բազմազան հանգստի առաջարկներ, փորձառություններ են առաջարկում պատմամշակութային զբոսաշրջիկներին և հատկապես բնահենք զբոսաշրջություն նախընտրողներին: Հարկ է նշել, որ կարևորելով միջհամայնքային համագործակցությունը, հետազոտության մեջ ներառված է նաև Արտաշատ համայնքի Ազատի ջրամբարը, որն ավելացված արժեք է հաղորդում ժամանցի կազմակերպմանը՝ հարստացնելով արկածային հնարավորությունների առաջարկները:
- **Տնտեսական ազդեցություն.** Վեդի համայնքում զբոսաշրջության զարգացումը ներուժ ունի առաջիկա հինգ տարիների ընթացքում համայնքի ՀՆԱ-ն ավելացնելու մինչև 15%-ով, որից բխող կանխատեսումները ցույց են տալիս տեղական զբաղվածության և գործարար հնարավորությունների աճ: Սա կակտիվացնի և կխթանի ներդրումները հատկապես գյուղական բնակավայրերում ենթակառուցվածքների բարելավման և հյուրընկալման ու ծառայությունների ոլորտում նոր հանգույցների ձևավորման ուղղությամբ՝ զարկ տալով համայնքային տնտեսությունների զարգացմանը, սոցիալական վիճակի բարելավմանը: Հարկ է նշել, որ այս ամենը հարկավոր է դիտարկել շրջակա միջավայրի հանդեպ համապատասխան հոգածության դրսևորման համատեքստում:
- **Ռազմավարական առաջարկություններ.** Զբոսաշրջության զարգացման ոլորտում ցանկալի արդյունքների հասնելու համար հետազոտությունն առաջարկում է ենթակառուցվածքների ընդլայնում և առկա հնարավորությունների զարգացում, կատարելագործում, նոր զբոսաշրջային ուղղությունների և արդյունքների ձևավորում, նպատակային մարքեթինգի միջոցով տեղանքի բացառիկ առաջարկների խթանում, դրանց տեսանելիության ընդլայնում ներքին, ներգնա թիրախային զբոսաշրջային

խմբերի համար և կայուն բնապահպանական փորձի կիրառում, զբոսաշրջային հոսքերի մեծացման արդյունքում բնական միջավայրի հանդեպ հոգածության ապահովում:

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախապատմություն և համատեքստ.

Հայաստանի սրտում գտնվող Վեդին կենսունակ համայնք է, որը հայտնի է իր հարուստ մշակութային ժառանգությամբ և յուրահատուկ բնական լանդշաֆտներով: Համայնքի նպաստավոր դիրքը՝ կարող է ապահովել Հայաստանի հարավից դեպի մայրաքաղաք անցնող հոսքերի համար բազմաբնույթ առաջարկներ: Այն իդեալական վայր է կարճատև՝ հիմնականում մինչև 1 օրով, այցելությունների համար, սակայն ունի նաև երկարատև կացության համար զբոսաշրջային վայր դառնալու հնարավորություններ: Դարերի պատմություն ունեցող Վեդին հարուստ է պատմական տեսարժան վայրերով՝ ներառյալ հնագույն վանքերը, բերդերը և եզակի երկրաբանական կազմավորումները: Տարածաշրջանը բնութագրվում է իր բազմազան էկոհամակարգերով, որոնք տատանվում են փարթամ հովիտներից մինչև չոր լեռնաշխարհներ, և բնակավայր են հանդիսանում բուսական և կենդանական աշխարհի բազմաթիվ ներկայացուցիչների համար:

Տնտեսական նշանակալի առաջընթաց արձանագրելու համար այս տարածաշրջանում խիստ կարևորվում է միջհամայնքային համագործակցությունը: Զբոսաշրջային ներուժի տեսանկյունից ամենանպատակահարմարը համարվում է Արտաշատ համայնքը, քանի որ Ազատի ջրամբար ռեսուրսն արդեն իսկ բանուկ զբոսաշրջային ուղղություն է ստեղծում: Այս համայնքով է անցնում 18 կմ երկարությամբ Գառնի-Լանջազատ վերականգնված ճանապարհը, որը կարևոր է նաև զբոսաշրջության զարգացման տեսանկյունից: Ներկայումս առկա են երկու տնտեսավարողներ, որոնք գործում են Ազատի ջրամբարի մոտակայքում՝ «Էկոավան - տուն անիվների վրա» (7 հատ ավտոբուս է՝ յուրաքանչյուրում կարող է հյուրընկալվել 2-4 հոգի) և քրթեջային հանգստավայր, որն իրականացնում է «Նարեկացի արվեստի միության» հիմնադիրը:

Զբոսաշրջության զարգացման կարևորությունը.

Վեդիում զբոսաշրջության զարգացումը միայն տնտեսական հնարավորություն չէ. դա մշակութային ինքնության պահպանման, համայնքի բարեկեցության բարձրացման և շրջակա միջավայրի հանդեպ պատասխանատվության խթանման ճանապարհ է: Օգտագործելով իր բնական և մշակութային ռեսուրսները՝ Վեդին կարող է դառնալ բազմազան հետաքրքրություն ունեցող այցելուների հանգրվան: Համայնքի զբոսաշրջային ներուժին համապատասխան՝ կարևորում ենք առաջնային ուշադրություն հատկացնել գծապատկեր 1-ում ներկայացված զբոսաշրջության ուղղություններին.


Տվյալ ուղղություններով զբոսաշրջության ոլորտի աճը կհանգեցնի՝

1. համայնքում ներդրումների հոսքի մեծացմանը,
2. տեղի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը,

3. հանրային ենթակառուցվածքների ստեղծմանն ու զարգացմանը,
4. զբոսաշրջության ու հարակից ոլորտներում աշխատատեղերի ստեղծմանը,
5. արտագաղթի դադարեցմանը, երիտասարդների ներգրավմանն ու զբաղվածության ապահովմանը,
6. մշակութային և բնական ժառանգության հանրահռչակմանը:

Գծապատկեր 1.

Վեդու ներուժին բնորոշ զբոսաշրջության զարգացման հնարավոր ուղղություններ



Զբոսաշրջության զարգացման ծրագրի նպատակները.

Հետազոտության ընդհանուր նպատակն է դիտարկել Վեդի համայնքի բնական, մշակութային ներուժը՝ որպես տնտեսության այլընտրանքային զարգացման միջոց, ինչը կենսակայուն միջավայր կձևավորի համայնքի և հարակից բնակավայրերի համար: Աշխատանքի մեջ առավել ուշադրություն է դարձվելու էկոզբոսաշրջությանը, արկածային, պատմամշակութային, գաստրո-զբոսաշրջության և ագրոզբոսաշրջության ներուժի, հեռանկարային զարգացման, զբոսաշրջային արդյունքի դիվերսիֆիկացման հնարավորություններին:

Ծրագրի հատուկ նպատակները ներառում են.

- **Այցելուների փորձի բարելավում. Նպաստել** ենթակառուցվածքների զարգացմանը և մատուցվող ծառայությունների որակի բարելավմանը՝ այցելուների համար դրական տպավորություններով հագեցած, հիշարժան փորձ ապահովելու և կրկին նոր փորձառությունների համար հետ վերադառնալու ակնկալիքի համար:
- **Տնտեսական աճ. Նպաստել** առաջիկա հինգ տարիների ընթացքում այցելուների ժամանումների ավելացմանը շուրջ 30%-ով՝ ապահովելով լրացուցիչ եկամուտ

համայնքի ու հարակից բնակավայրերի տնտեսվարողների համար և խթանելով տեղացիների զբաղվածությունը:

- **Կայուն գործելակերպ. Աջակցել** կայուն զարգացման սկզբունքներին համապատասխան գործելակերպի ներդրմանը՝ շեշտադրելով էկոլոգիապես զգայուն տեղանքներում զբոսաշրջության զարգացման առանձնահատկությունները, որոնք պետք է համահունչ լինեն շրջական միջավայրի պահպանության նպատակներին և կանոնակարգեն, հարկ եղած դեպքում՝ սահմանափակեն զբոսաշրջային ակտիվ սեզոնին մեծածավալ այցերը:
- **Մշակույթի պահպանում. Խթանել և պահպանել** Վեդի համայնքի պատմամշակութային ժառանգությունը՝ ապահովելով այցելավայրերի կառավարման, բարեկարգման, ամրակայման, տեղեկատվական և ուղղորդիչ ցուցանակներով համալրման, հավաստի և բազմալեզու տեղեկատվության մշակման համար անհրաժեշտ ռեսուրսներ, ինչպես նաև նաև արժեվորել նյութական մշակութային արժեքները:

3. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՆԵՐՈՒԺԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

3.1 Զբոսաշրջության ներկա վիճակը

Ենթակառուցվածքներ.

Վեդի համայնքում առկա զբոսաշրջային ենթակառուցվածքները ներառում են.

1. Հյուրանոցային տնտեսության օբյեկտներ,
2. Հանրային սնունդ սպասարկող հաստատություններ,
3. Տրանսպորտային ենթակառուցվածքներ,
4. Տեսարժան բնական և պատմամշակութային վայրեր
5. Հուշանվերներների վաճառակետեր,
6. և այլ զբոսաշրջային ծառայություններ ստեղծող ու մատուցող կազմակերպություններ, օրինակ՝ գինու համտեսի սրահներ, թռչնադիտարկում, արտաճանապարհային տուրեր և այլն:

Վերոնշյալից որոշ զբոսաշրջային վայրեր արդեն ունեն կայացած ծառայություններ, մյուսները պահանջում են զգալի բարելավումներ՝ ժամանակակից ճանապարհորդների ակնկալիքները բավարարելու համար: Հիմնական ենթակառուցվածքային բաղադրիչները ներառում են.

ա) Տեղավորում. ներկայումս Վեդին առաջարկում է հյուրանոցային տնտեսության օբյեկտների շատ քիչ տարբերակներ և զբոսաշրջային հոսքերի ակտիվացումը կհանգեցնի ավելի բազմազան տեսակների ձևավորման՝ ներառյալ միջին կամ բարձր դասի

հյուրանոցներ, բուտիկ (boutique) հյուրանոցներ, էկո-օթյակներ (eco-lodges), հյուրատներ և այլն:

Աղյուսակ 1.

Արարատի մարզի հյուրանոցային տնտեսության օբյեկտներ¹

ՀՀ-ի հետ համադրված	2018թ.	2019թ.	2020թ.	2021թ.	2022թ.
	Հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը ²				
Հայաստանի Հանրապետություն	652	769	847	980	1029
Արարատի մարզ	9	8	8	11	11

Մարզի առանձին համայնքների պաշտոնական վիճակագրության բացակայության պատճառով հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը ներկայացվում է Արարատի մարզի համար:

բ) Փոխադրում. Վեդին կապվում է մոտակա բնակավայրերին և Երևանին բարձր որակի ավտոճանապարհով, գործում է երկաթուղի, հասանելի է կանոնավոր հանրային ավտոբուսներով, համայնքային ճանապարհային ցանցը գրեթե բարվոք է, սակայն անհրաժեշտություն կա որոշ զբոսաշրջային այցելավայրերին մոտեցող ճանապարհների բարեկարգումներ և տրանսպորտային ենթակառուցվածքների բարելավումներ իրականացնել՝ հիմնական ուղղություններին մատչելի հասանելիություն ապահովելու և հեռավոր վայրերից ավելի մատչելի մուտք գործելու համար:

գ) Ջրոսաշրջային ծառայություններ. որոշ ուղղություններում, օրինակ՝ Խոսրովի անտառ պետական արգելոցում կան էքսկուրսավարների ծառայություններ և ցուցանակներ, սակայն առկա է տեղեկատվական կենտրոնների ստեղծման, էքսկուրսավարների ծառայությունների ընդլայնման, ինչպես նաև զբոսաշրջային բոլոր ուղղություններում տեղեկատվական, ուղղորդիչ ցուցանակների տեղադրման, և իհարկե հանգստյան գոտիների ստեղծման կարիք՝ զբոսաշրջիկների թվի աճը ապահովելու համար:

դ) Պատմական վայրեր և հուշարձաններ. Վեդիի հարուստ մշակութային ժառանգությունը մարմնավորված է նրա պատմական վայրերում և հուշարձաններում: Անհրաժեշտ է ներդնել պահպանման ջանքեր այս տեսարժան վայրերը վատթարացումից պաշտպանելու և ապագա սերունդներին դրանց հասանելիությունն ապահովելու համար:

Այս հետազոտությամբ նախատեսված տարածաշրջաններում. հաշվի առնելով առկա զբոսաշրջային ներուժը, կազմվել են տուրերի տարբերակներ, որոնք որպես

¹ ՀՀ Արարատի մարզը թվերով 2023թ., Վիճակագրական ժողովածու, էջ 140


Էլեկտրոնային աղբյուր՝ <https://armstat.am/file/doc/99542123.pdf>

² Ցուցանիշը հաշվարկվում է համաձայն «Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչի» վերանայված երկրորդ խմբագրության (ՏԳՏԴ, խմբ. 2) և ներառում է «Կացության կազմակերպում» տնտեսական գործունեության տեսակը՝ 55 ծածկագրի ներքո:

այլընտրանքներ հնարավոր է գետեղել դեպի Հայաստան ներգնա զբոսաշրջային բազմօրյա տուրփաթեթներում, միաժամանակ դրանցով երկօրյա առաջարկներ ձևավորել ներքին զբոսաշրջության թիրախային խմբերի համար: Այդ տուրերը ներկայացված են Հավելվածներ բաժնում:

Գծապատկեր 2.

Վեդիում զբոսաշրջային ծառայությունների և հյուրընկալման զարգացման խոչընդոտները



Այցելուների³ վիճակագրություն.

Վերջին տարիներին, թեև բավականին դանդաղ տեմպերով, Վեդի համայնքում դիտարկվում է այցելուների թվի կայուն աճ՝ ժողովրդագրական բազմազան պատկերով,

³ 1) այցելու՝ ֆիզիկական անձ, որը ցանկացած նպատակով (գործնական, հանգստի կամ անձնական) ճանապարհորդում է իր հիմնական կացության վայրից այլ վայր մինչև մեկ տարի ժամկետով, բացառությամբ ժամանման վայրում ռեզիդենտ ֆիզիկական անձի կամ կազմակերպության կողմից վճարվող աշխատանքի կամ ծառայության մեջ ներգրավվելու դեպքերի:

Սահմանային, սեզոնային կամ այլ կարճաժամկետ աշխատանքի, ցանկացած բնագավառում հեռավար (թվային) աշխատանքի, դիվանագիտական, հյուպատոսական, զինվորական ծառայության, երկարաժամկետ (մեկ տարի և ավելի) կրթություն ստանալու, երկարաժամկետ (մեկ տարի և ավելի) բժշկական օգնություն և սպասարկում ստանալու նպատակներով ճանապարհորդող ֆիզիկական անձինք այցելու չեն համարվում:

2) զբոսաշրջիկ՝ այցելու, որը ժամանման վայրում անցկացնում է առնվազն մեկ գիշերակաց, սակայն ճանապարհորդությունը տևում է մինչև մեկ տարի

որը ներառում է ինչպես ներքին, այնպես էլ ներգնա զբոսաշրջիկներ: Հիմնական միտումները ներառում են հետևյալը՝

- **Սեզոնային միտումներ.** ակտիվ զբոսաշրջային սեզոնը համահունչ է գարնանը, ամռանը և վաղ աշնանը, ձմռանը նկատվում է զգալի անկում: Պահանջվում են ներդրումներ ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսների տեսքով՝ Վեդին դարձնելու ամբողջ տարվա համար այցելությունների ակտիվ վայր:
- **Այցելուների բավարարվածություն.** հարցումները ցույց են տալիս, որ այցելուները գնահատում են Վեդիի բնական ռեսուրսների գեղեցկությունը և մշակութային ժառանգությունը, սակայն ընդգծում են բարելավված ենթակառուցվածքների և ծառայությունների որակի անհրաժեշտությունը:
- **Վիճակագրական տվյալների սղություն.** Հարկ է նշել, որ Հայաստանում տեղական մակարդակով՝ մարզային, համայնքային զբոսաշրջային վիճակագրություն չի հավաքագրվում: Սակայն Վեդի համայնքի ամենաակտիվ այցելավայրի՝ Խոր Վիրապ վանքի համար առկա է հատկապես տեղեկատվությունը: Ըստ «Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման» ծրագրի մոնիթորինգի շրջանակներում կատարված հետազոտության՝ այստեղ հաշվարկվել է այցելուների թիվը ըստ տրանսպորտային միջոցների տեսակների (անձնական մեքենաներ, միկրոավտոբուսներ, ավտոբուսներ և այլն)՝ այցելուների հաճախելիությունը չափելու նպատակով:

Տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ Խոր Վիրապ վանքի տարածք այցելուների թիվը 2019թ. ակտիվ շրջանում կազմել է օրական մոտ 700 այցելու: Նույն ցուցանիշը պասիվ շրջանում կազմել է 350 այցելու: 2019թ. Խոր Վիրապի տարածք այցելուների թիվը գնահատվել է մինչև 250 հազար, իսկ 2021թ.՝ մոտ 90 հազար:

3.2 Զբոսաշրջային տեսարժան վայրեր

Վեդիում զբոսաշրջային ամենահայտնի վայրը Խոր Վիրապ վանքն է, որը համարվում է նաև Հայաստանի ամենաշատ այցելվող վայրերից մեկը, և Խոսրովի անտառ պետական արգելոցը: Ստորև՝ աղիուսակներում, ներկայացված են Վեդիի մեծ ներուժ ունեցող այցելավայրերը:

Աղյուսակ 2.

Վեդիում հիմնական այցելվող պատմամշակութային զբոսաշրջային վայրեր

Անվանում	Նկարագրություն	Լուսանկար
----------	----------------	-----------

Տափի բերդ	Տափի բերդ-ամրոցը գտնվում է Խոսրով գետի աջ ափին՝ Ուրծ քաղաքատեղիի հյուսիսարևմտյան եզրին: Այն կառուցվել է 10-րդ դարի առաջին քառորդում, կանոնավոր հատակագծով քառանկյուն մոնումենտալ շինություն է, ունի ճարտարապետական և ամրոցաշինական մեծ արժեք:	
Սուրբ Կարապետ վանք	Հովհաննես Կարապետի վանքը գտնվում է Արարատի մարզի Լուսաշող գյուղից 6 կմ հարավ-արևմուտք, Մոշաղբյուր գյուղատեղիում, Ուրծի լեռների հյուսիսային փեշին, Վեդի-Լուսաշող ճանապարհի աջ կողմում: Արձանագրություններից մեկի համաձայն վանքը հիմնել են Օրբելյանները 14-րդ դարի սկզբներին:	
Խոր վիրապ	Պատմական Արտաշատ քաղաքի բլուրներից մեկի արևելյան լանջին՝ միջնաբերդի տեղում, այժմյան Լուսառատ գյուղից հարավ-արևմուտք հառնվում է Հայոց նվիրական սրբավայրերից՝ Խոր Վիրապի վանքը: Այսօր կանգուն մնացած մատուռը կառուցվել է 1661թ.:	
Կաքավաբերդ	Կաքավաբերդը գտնվում է Խոսրովի արգելոցի տարածքում, Ազատ գետի աջ ափին, պատմական Մազազ գավառի Բերդատակ լքված բնակավայրի մոտ: Կաքավաբերդը պատմական Հայաստանի ամրոցաշինության լավագույն օրինակներից է:	
Սպիտակ վանք	վանքը գտնվում է Արարատի մարզի Լանջանիստ գյուղից 1.5 կմ հյուսիս-արևմուտք: Եկեղեցին կաթուցվել է 1301 թ'., այն ուղղանկյունաձև միանավ բազիլիկ է՝ կառուցված սպիտակ սրբատաշ ավազաքարով:	

Թվարկված հայտնի այցելավայրերից բացի կան նաև «թաքնված» կառույցներ, որոնք անհրաժեշտ է բացահայտել զբոսաշրջային շուկայի համար: Նման վայրերից է հանդիսանում Լուսառատ բնակավայրի Աննա թագուհու քարեբաղնիսը:

Վերոնշյալ աղյուսակի որոշ վայրերի համար՝ փորձառությունների նկարագրություններ.

Խոր Վիրապ վանք.

- **Նկարագրություն:** Խոր Վիրապի վանքը, որը նշանակալից կրոնական վայր է, յուրահատուկ կարևորություն է հաղորդում Հայաստանի քրիստոնեական ժառանգությանը: Նրա ապշեցուցիչ ճարտարապետությունն ու հանգիստ միջավայրը դարձնում են այն որպես պատմամշակութային ուղղությունը նախընտրողների համար պարտադիր այցելավայր:
- **Այցելուների փորձ.** Զբոսաշրջիկները կարող են ուսումնասիրել վանքի հնագույն կառույցները, վայելել շրջակա լանդշաֆտների համայնապատկերները և մասնակցել տարածքում առաջարկվող էքսկուրսիաներին:

Տափի բերդ կամ Գևորգ Մարգաբետունու ամրոց.

- **Նկարագրություն.** Այս միջնադարյան ամրոցը, որը տեղակայված է Ուրցաձոր գյուղից 6 կմ հյուսիսարևելք՝ բլրի գագաթին, վկայում է Վեդիի ռազմավարական նշանակության մասին պատմական հակամարտություններում: Բերդը պատկերացումներ է տալիս միջնադարյան ճարտարապետության և ռազմական կառույցների պատմության մասին:
- **Այցելուների փորձ.** Այցելուները կարող են քայլել մասնակի վերականգնված բերդի ավերակների միջով, վայելել գեղատեսիլ տեսարանները և ծանոթանալ դրա պատմական նշանակությանը մեկնաբանական ցուցադրությունների և էքսկուրսիաների միջոցով:

Հովհաննես Կարապետ վանք.

- **Նկարագրություն.** Վանքը տեղակայված է Ուրծի լեռների հյուսիսային փեշին՝ Վեդի-Լուսաշող ճանապարհի աջ կողմում: Այն հայտնի է իր առանձնահատուկ ճարտարապետությամբ և հոգևոր միջավայրով: Սուրբ Կարապետի վանքը կարևոր մշակութային վայր է, ներքին զբոսաշրջիկների համար, սակայն գրավում է նաև ուխտավորների, ովքեր հետաքրքրված են կրոնական կառույցներով:
- **Այցելուների փորձ.** Այցելուները, ուխտավորները կարող են շրջել մասնակի խոնարված վանական համալիրի տարածքով, և հաղորդակից լինել, ծանոթանալ երբեմնի իշխանական ընտանիքների թողած հսկայական հավատի դրսևորումներով և ժառանգությամբ:

Աղյուսակ 3.

Վեդիում հիմնական այցելվող բնության հետ կապված զբոսաշրջային վայրեր

Անվանում	Նկարագրություն	Լուսանկար
----------	----------------	-----------

<p>Խոսրովի արգելոց</p>	<p>Խոսրովի արգելոցը կազմավորվել է IV դ. Խոսրով Բ Կոտակթագավորի կողմից հիմնած անտառի տարածքում 1958թ. /տարածքը՝ 29196 հա/ Գեղամա լեռների հարավ-արևմուտքում՝ Ուրծի, Դահնակի, Երանոսի լեռնաշղթաների, Խոսրովասար լեռների լանջերին, Ազատ և Վեդի գետերի ավազաններում՝ ծ.մ. 850-2800մ բարձրություններում:</p>	
<p>Հրեշտակների ձոր</p>	<p>Հրեշտակների ձոր անունով հայտնի դեղնակարմրավուն ժայռաբեկորներով շրջապատված կիրճը գտնվում է Արարատի մարզի Վեդի քաղաքի հարևանությամբ: Հրեշտակների ձորի շրջակայքում առկա են նաև հանքային ջրերի բնական աղբյուրներ՝ հարուստ տարբեր էլեմենտներով:</p>	
<p>Քարե գիրք</p>	<p>Երկրաբանական այս բացառիկ կազմավորումը գտվում է Արարատի մարզի Վեդի համայնքի Դաշտաքար բնակավայրի հարևանությամբ: Իր բացառիկ կազմավորմամբ մեծ գրավճություն է ներկայացնում զբոսաշրջիկների համար:</p>	
<p>Ազատի ջրամբար⁴</p>	<p>Ազատի ջրամբար կառուցվել է Լանջազատ գյուղի մոտ, Ազատ գետի միջին հոսանքում: Ջրամբարը օգտագործվում է Արարատյան դաշտի ոռոգման համար: Ջրամբարի տարածքը շատ գեղեցիկ է: Երկինքն ու ամպերն արտացոլվում են ջրի մեջ և, կախված օրվա ժամից, յուրահատուկ տեսք են հաղորդում ջրամբարին:</p>	

Նշված վայրերից որոշների համար ներկայացված են փորձառությունների նկարագրություններ:

Խոսրովի անտառ պետական արգելոց.

⁴ Ազատի ջրամբարը չի գտնվում Վեդի համայնքում, սակայն ծրագրի մեկնարկային հայտում նշված է, որ զբոսաշրջային ռեսուրսների մեջ հարկավոր է դիտարկել նաև այն:

- **Նկարագրություն.** Խոսքովի անտառ պետական արգելոցը կենսաբազմազանության բացառիկ վայր է, որտեղ ապրում են բուսական և կենդանական աշխարհների բազմազան ներկայացուցիչներ, ինչը այն դարձնում է պարտադիր այցելության վայր բնության սիրահարների և էկոտուրիստների համար:
- **Այցելուների փորձ.** գործողությունները ներառում են զբոսանքներ բնության գրկում, վայրի բնության (թռչունների, կենդանիների) դիտարկումներ և կրթական ծրագրեր՝ ուղղված վայրի բնության ուսումնասիրությանը և կենսաբազմազանության պահպանման ու զարգացման վրա, ինչպես նաև բնության գրկում հանգիստի հնարավորություն՝ վրանատեղիներում և պահպանվող գոտում գտնվող հյուրատներում:

Հրեշտակների ծոր.

- **Նկարագրություն.** Հայտնի է իր հիասքանչ լանդշաֆտներով և երկրաբանական կազմավորումներով: Հրեշտակների ծորը կատարյալ է գեղեցիկ վայրերի և քայլարշավային զբոսաշրջության սիրահարների համար:
- **Այցելուների փորձ.** Այցելուները կարող են մասնակցել արշավների, լուսանկարչական շրջագայությունների և վայելել հովտի տեսարժան գեղեցկությունն ու հանգստությունը:

Ազատի ջրամբար.

- **Նկարագրություն.** Ազատի ջրամբարը ջրային գործունեության, արկածային զբոսաշրջության փորձառությունների համար հայտնի վայր է, որը հնարավորություն է տալիս նավով զբոսնելու, սաբորդինգի, ձկնորսության և խնջույքի համար՝ տեղակայված լեռների ցնցող տեսարանների ֆոնին:
- **Այցելուների փորձ.** Զբոսաշրջիկները կարող են հանգստանալ ջրի մոտ և ուսումնասիրել մոտակա արահետներն ու պիկնիկի վայրերը:

Գինեգործարաններ.

Համայնքում գործող երկու գինեգործարան պատրաստ են զբոսաշրջային այցերի և համոտեսների կազմակերպման համար: Դրանք են՝

- Վեդի ալկո, գ. Գինեվետ – գործարանում նախատեսվում է ձևավորել համոտեսի սրահ:
- S Տուշպա գինու մառան / «VAN 777» Կոնյակի և գինու գործարան, գ. Տափերական – գործարանում գործում է համոտեսի ծառայություն, և առկա է ոճային ռեստորան:

Ագրոզբոսաշրջության ռեսուրսներ (այգիներ).

Համայնքում կա ագրոտուրիզմի հսկայական ռեսուրս, որոնցից հնարավոր է զարգացնել այս զբոսաշրջային ուղղությունը: Մասնավորապես այդ ռեսուրսներն են՝

- Բանջարային մշակաբույսեր (գյուղեր Ոսկետափ, Նոր Կյանք, Փոքր Վեդի), մշակվում են տերևաբանջարներ՝ հատկապես սպասնախ:
- Բազմամյա կորիզավորներ, պտղատուներ՝ սալոր, բալ, դեղձ, ծիրան (գյուղեր Նոր Կյանք, Արալեզ, Սիսավան, Նոր Ուղի, Գինեվետ):
- Բազմամյա հնդավորներ՝ սերկևիլ, տանձ, խնձոր (գյուղեր Ուրցաձոր, Շաղափ, Լուսաշող, քաղաք Վեդի):
- Խաղողագործության հանրապետական նշանակության մեծ խաղողագործական կենտրոն է Լուսառատ բնակավայրը՝ մինչև 260 հա: Խաղողագործության օջախ է նաև Տափերական գյուղը, որտեղ տարիներ առաջ խաղողի բերքատվությունը հասել

է 6000տ: Ավանդական մշակաբույս է (գյուղեր Եղեգնավան, Արալեզ, Սիսավան, Այգավան):

Հարկ է նշել, որ այս հետազոտության մեջ ներառված բնակավայրերում առկա են գյուղատնտեսության ոլորտի առաջադեմ տեխնոլոգիաներ, որոնք իսկապես կարող են այդ ոլորտում նորարարական գործունեությամբ հետաքրքրված զբոսաշրջիկների ուշադրությունը գրավել: Քանի որ նշյալ բնակավայրերում գյուղատնտեսության ոլորտը տնտեսության առաջատար ճյուղերից է, այդ տարածքների զարգացման առաջնահերթությունները, նաև նորարարական գյուղատնտեսության առջև ծառացած մարտահրավերները հարկավոր է առանձնակի կարևորությամբ դիտարկել՝ ագրոզբոսաշրջության ուղղությամբ զբոսաշրջային փաթեթների ձևավորման և խթանման համար:

3.3 Այցելուների ժողովրդագրություն և միտումներ

Վեդիի տարածաշրջանի զբոսաշրջային զարգացումը պահանջում է խորը պատկերացում այցելուների ժողովրդագրության և նրանց վարքագծային միտումների մասին: Այս բաժնում ներկայացվում է այցելուների ներկա ժողովրդագրական պատկերն ու միտումները, որոնք կարող են օգնել մշակել նպատակաուղղված ռազմավարություններ զբոսաշրջության ոլորտում:

Այցելուի պրոֆիլը.

- **Տարիքը և ծագումը.** Վեդին գրավում է այցելուների ժողովրդագրական բազմազանություն՝ 25-45 տարեկան զբոսաշրջիկների զգալի թվով: Միջազգային այցելուները հիմնականում գալիս են հարևան, ԱՊՀ երկրներից և Եվրոպայից: Կարևոր հատվածներ են ներկայացնում նաև դպրոցահասակների խմբերը, ընտանիքները, երբեմն նաև տարեց զբոսաշրջիկները:
- **Այցելության նպատակը.** Զբոսաշրջիկները Վեդի են այցելում տարբեր պատճառներով, ներառյալ մշակութային, բնության զբոսաշրջությունը և արկածային գործունեությունը: Համայնքը ներքին զբոսաշրջիկների համար ակտիվ այցելավայր է՝ այդ թվում դպրոցական էքսկուրսիաները, հանգստյան օրերին ընտանեկան հանգիստն ու կրոնական վայրերի այցելությունները:
- **Ծախսային օրինաչափություններ.** Այցելուները հակված են ծախսել գիշերակացի, հանրային սննդի սպասարկման օբյեկտների և էքսկուրսիաների, մասնագիտացված շրջայցերի վրա (կենդանիների, բույսերի դիտարկում, քայլարշավներ և այլն), նաև կա աճող հետաքրքրություն տեղական արտադրանքների նկատմամբ (պանիր, գինի և այլն):

Տարիքային խմբեր.

- **18-30 տարեկաններ (Երիտասարդներ):** Այս խումբը գերադասում է արկածային և ակտիվ հանգիստ, ինչպիսիք են արշավները, լեռնագնացությունը և էկոտուրիզմը:
- **31-50 տարեկաններ (Միջին տարիքի):** Նախընտրում են մշակութային և գաստրոփորձառություններ, հետաքրքրվում են պատմական վայրերով և ավանդական խոհանոցով:
- **51 և ավել տարիքային խումբ (Մեծահասակներ):** Գնահատում են հանգիստ միջավայր, այցելում են առողջարաններ և մասնակցում են մշակութային միջոցառումներին:

Ազգայինություն և ծագում.

- **Ներքին զբոսաշրջիկներ:** Հայաստանի տարբեր մարզերից այցելուներ, ովքեր այցելում են պատմական և մշակութային վայրեր:
- **Միջազգային զբոսաշրջիկներ:** Հիմնականում ԱՊՀ երկրներից, ինչպես նաև Եվրոպայից, ԱՄՆ-ից և Չինաստանից: Նրանց հետաքրքրությունը Վեդիի նկատմամբ աճում է:
- **Սփյուռքահայեր:** Այցելում են իրենց ժառանգության հետ կապը վերականգնելու և ընտանիքների հետ ժամանակ անցկացնելու համար:

Սեռային բաշխում

- Կանայք: 50%
- Տղամարդիկ: 50%

Զբոսաշրջիկների սեռային բաշխումը համեմատաբար հավասար է, ինչը հնարավորություն է տալիս մշակել ծառայություններ և միջոցառումներ, որոնք հետաքրքիր կլինեն ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց համար:

Կրթական և տնտեսական մակարդակ.

- **Բարձր կրթական մակարդակ:** Շատ այցելուներ ունեն բարձրագույն կրթություն, ինչը նշանակում է, որ նրանք հետաքրքրված են կրթական և մշակութային միջոցառումներով:
- **Միջին և բարձր եկամուտներ:** Սա հնարավորություն է տալիս առաջարկել բարձրակարգ ծառայություններ և ապրանքներ:

Այցելուների վարքագիծ և նախասիրություններ.

- **Պահանջարկ դեպի էկոզբոսաշրջություն.**
 - **Կապ բնության հետ:** Այցելուները փնտրում են փորձառություններ, որոնք թույլ կտան կապ հաստատել բնության հետ, այցելել արգելոցներ, մասնակցել էկոլոգիական միջոցառումներին և այլն:
 - **Կայուն զբոսաշրջություն:** Աճում է հետաքրքրությունը կայուն և պատասխանատու զբոսաշրջային պրակտիկաների նկատմամբ:
- **Մշակութային և պատմական հետաքրքրություններ.**
 - **Այցելություն դեպի պատմական վայրեր:** Խոր Վիրապ, Գևորգ Մարգալետունու (Տափի) բերդ և այլ պատմական վայրերը մեծ հետաքրքրություն են առաջացնում:
 - **Մշակութային միջոցառումներ:** Փառատոներ, ավանդական արհեստների ցուցադրություններ և գաստրոնոմիական միջոցառումներ:
- **Արկածային զբոսաշրջություն.**
 - **Արշավներ և լեռնագնացություն:** Վեդիի լեռնային տարածքները գրավում են արկածային զբոսաշրջիկներին:
 - **Ջրային սպորտ և հանգիստ:** Ազատի ջրամբարը հնարավորություն է տալիս ջրային սպորտի և հանգստի համար:

Միտումներ

- **Այցելությունների աճող քանակ**
 - Վերջին տարիներին առկա է զբոսաշրջիկների թվի կայուն աճ՝ միջինում տարեկան 10%:

- **Սեզոնային բազմազանացում:** Թեև հիմնական այցելությունները կատարվում են ամռան ամիսներին, նկատվում է հետաքրքրություն աշնան և գարնան ամիսներին այցելելու նկատմամբ՝ ընդլայնելով զբոսաշրջային սեզոնը:
- **Տեխնոլոգիական գործոններ.**
 - **Առցանց պատվերներ:** Ավելի շատ զբոսաշրջիկներ են օգտագործում առցանց հարթակներ՝ կացության և այլ ծառայությունները պատվիրելու համար:
 - **Սոցիալական մեդիա:** Վեդիի գեղեցկությունը կարող է տարածվել սոցիալական մեդիայի միջոցով, որը կխթանի հետաքրքրությունը:
- **Գենդերային և սոցիալական զգայունություն.**
 - **Կանանց մասնակցություն:** Աճում է կանանց մասնակցությունը արկածային և էկոզբոսաշրջության մեջ:
 - **Ընտանեկան զբոսաշրջություն:** Ընտանիքները նախընտրում են Վեդին որպես հանգիստ և անվտանգ վայր հանգստի համար:
- **Շրջակա միջավայրի նկատմամբ վերաբերմունք.**
 - **Կանաչ զբոսաշրջություն:** Զբոսաշրջիկները ուշադրություն են դարձնում էկոլոգիական ազդեցությանը և նախընտրում են ծառայություններ, որոնք աջակցում են շրջակա միջավայրի պահպանությանը:
 - **Կայուն պրակտիկաներ:** Այցելուները գնահատում են տեղական արտադրանքների օգտագործումը, թափոնների նվազեցումը և էներգիայի արդյունավետությունը:

Առաջարկություններ.

- **Շուկայի սեզմենտացիա.**
 - Թիրախավորել երիտասարդներին՝ արկածային և էկոլոգիական փորձառությունների միջոցով:
 - Ներգրավել միջին տարիքի և մեծահասակ զբոսաշրջիկներին՝ մշակութային և գաստրոնոմիական միջոցառումների միջոցով:
 - Զարգացնել ընտանեկան զբոսաշրջությունը՝ առաջարկելով ընտանիքներին հարմար ծառայություններ:
- **Սեզոնայնության կրճատում.**
 - Կազմակերպել միջոցառումներ ամբողջ տարվա ընթացքում՝ փառատոներ, տոնավաճառներ:
 - Զարգացնել ձմեռային զբոսաշրջությունը՝ առաջարկելով ձմեռային սպորտի հնարավորություններ:
- **Թվային մարքեթինգ**
 - Բարելավել առցանց ներկայությունը՝ սոցիալական մեդիայի և զբոսաշրջային հարթակների միջոցով:
 - Զարգացնել բջջային հավելվածներ՝ տեղեկատվության մատչելիությունը հեշտացնելու համար :
- **Կայուն զբոսաշրջության խթանում**
 - Ներդնել էկոլոգիական պրակտիկաներ՝ տեղական բիզնեսների և ծառայությունների մեջ:

- Կազմակերպել կրթական ծրագրեր՝ զբոսաշրջիկների և համայնքի համար շրջակա միջավայրի պաշտպանության վերաբերյալ:

Թիրախային շուկաներ.

- **Էկոտուրիզմ՝ Էկո-զբոսաշրջիկներ.** Վեդիի բնական լանդշաֆտներով և կենսաբազմազանությամբ հետաքրքրված այցելուները (հիմնականում Խոսրովի անտառ պետական արգելոց) փնտրում են բացառիկ ճանապարհորդական փորձ, որը կապում է նրանց բնության հետ: Էկոտուրիզմի հնարավոր երթուղիների խթանման նպատկով մշակված տեղեկատվական նյութերը հասանելի են [այստեղ](#) և [այստեղ](#):
- **Մշակութային զբոսաշրջություն՝ ճանապարհորդներ.** Վեդիի հարուստ պատմությամբ ու մշակութային ժառանգությամբ գրավված այցելուները հետաքրքրված են պատմական վայրերի, տեղական ավանդույթների և մշակութային իրադարձությունների ուսումնասիրությամբ: Մշակութային զբոսաշրջության հնարավոր երթուղիների խթանման նպատկով մշակված տեղեկատվական նյութը հասանելի է [այստեղ](#):
- **Արկածային զբոսաշրջություն՝ ակտիվ հանգիստ նախընտրողներ.** Բացօթյա գործունեության և արկածային զբոսաշրջության սիրահարները (արշավներ, ջրային սպորտաձևերը, կվադրացիկներով կամ արտաճանապարհային մեքենաներով տուրերը) գտնում են, որ Վեդիի բազմազանությամբ հարուստ տեղանքը իդեալական է արկածային զբոսաշրջության համար: Այս տարածաշրջանում ամենակարևոր արկածային այցելավայրերից է Ազատի ջրամբարը: Արկածային զբոսաշրջության հնարավոր երթուղիների խթանման նպատկով մշակված տեղեկատվական նյութը հասանելի է [այստեղ](#):
- **Գաստրո զբոսաշրջություն՝ ներառյալ գինու զբոսաշրջություն՝** այցելուներ, ովքեր հետաքրքրված են տեղանքի խոհանոցային ավանդույթներով, գինու արտադրման մշակույթով կամ ցանկանում են ներգրավված լինել դրանց պատրաստման փորձառությունների մեջ (Արարատի մարզը որպես Հայաստանի գինեգործական շրջան շատ կարևոր է էնոտուրիստների համար): Գաստրո զբոսաշրջության հնարավոր երթուղիների խթանման նպատկով մշակված տեղեկատվական նյութը հասանելի է [այստեղ](#):
- **Ագրոզբոսաշրջություն՝** գյուղատնտեսական հետաքրքրություն ունեցող զբոսաշրջիկներ, ովքեր ֆերմայից են, ագրոբիզնեսից, կամ էլ գյուղատնտեսությունից հեռացածները: Նրանք ցանկանում են տեսնել մեկ այլ գյուղատնտեսի առօրյան: Ագրոզբոսաշրջիկները շատ փոքր տոկոսն են կազմում ընդհանուր ճամփորդողների, հիմնականում նրանք գյուղատնտեսությամբ հետաքրքրվածներն են: Այս ուղղությունը սերտ կապված է նաև գյուղական զբոսաշրջության հետ, երբ զբոսաշրջիկները ցանկանում են բացահայտել գյուղական կենսակերպը, ծանոթանալ գյուղական միջավայրում պահպանվող ավանդույթներին և խոհանոցին, մասնակցել գյուղատնտեսական աշխատանքներին,

ստանալ ծառայություններ գյուղական կամ փոքր քաղաքային բնակավայրերում ապրող մարդկանցից:

3.4 Մրցակցային առավելություններ

Հարևան համայնքների համեմատություն. Հարևան շրջաններն առաջարկում են նմանատիպ տեսարժան վայրեր, սակայն բացակայում են Վեդիի մշակութային և բնական փորձառությունների եզակի համադրությունը: Վեդիի մոտ լինելը մայրաքաղաքից դեպի հարավ հիմնական մայրուղուն և խոշոր քաղաքներին նրան մրցակցային առավելություն է տալիս հանգստյան օրերին կամ կկարճաժամկետ (մինչև մեկ ցերեկ տևողությամբ) այցելուներին գրավելու համար:

Եզակի վաճառքի առաջարկ (USPs). Հատկանշական առանձնահատկություններ. Վեդիի եզակի վաճառքի առաջարկները ներառում են նրա պատմական տեսարժան վայրերը, բազմազան բացառիկ էկոհամակարգերը և գաստրո, մշակութային փորձառությունները: Վեդիի համայնքի ամենակարևոր մրցակցային առաջարկը Խոսրովի անտառ պետական արգելոցի ներուժն է և Խոր Վիրապ վանքը, որոնք կարող են իրենց ներկայությամբ հիմնական այցելությունների պատճառն են հանդիսանում: Մասնագիտացված այցերի համար բացառիկ է նաև տեղանքի խաղողագործական տերուառը:

Աղյուսակ 4.

Վեդիի համայնքի զբոսաշրջության ոլորտի SWOT վերլուծություն

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<p>" Եզակի մշակութային ժառանգություն</p> <ul style="list-style-type: none"> • Խոր Վիրապի վանք, Տափի բերդ, Տարածաշրջանի ավանդական արվեստներ և արհեստներ: <p>" Հարուստ բնական ռեսուրսներ</p> <ul style="list-style-type: none"> • Խոսրովի անտառի պետական արգելոց, Ազատի ջրամբար, բազմազան լանդշաֆտներ: <p>" Շատ բարենպաստ աշխարհագրական դիրք</p> <ul style="list-style-type: none"> • Մերձավորություն Երևանին, ճանապարհների առկայություն: <p>" Հյուրընկալ և ջերմ համայնք</p> <ul style="list-style-type: none"> • Տեղական բնակչության մասնակցություն, ավանդական խոհանոց և հյուրընկալություն: <p>" Զբոսաշրջության բազմազան տեսակների զարգացման ներուժ</p> <ul style="list-style-type: none"> • Էկո-, արկածային, մշակութային, գաստրո և այլ զբոսաշրջություն: 	<p>" Սահմանափակ ենթակառուցվածքներ</p> <ul style="list-style-type: none"> • Անբավարար ճանապարհներ, կացության օբյեկտների պակաս, հասարակական տրանսպորտի թույլ զարգացվածություն: <p>" Մարքեթինգային ռազմավարությունների բացակայություն</p> <ul style="list-style-type: none"> • Միջազգային ճանաչման պակաս, թվային մարքեթինգի թույլ օգտագործում, զբոսաշրջային տեղեկատվական կենտրոնների բացակայություն: <p>" Ընդգծված սեզոնային զբոսաշրջություն</p> <ul style="list-style-type: none"> • Աշնան և ձմռան ամիսների քիչ այցելուներ, սեզոնային բիզնեսների կախվածություն: <p>" Մասնագիտական կադրերի պակաս</p> <ul style="list-style-type: none"> • Հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտի ուսուցման պակաս, օտար լեզուների իմացության սահմանափակումներ: <p>" Ներդրումների սահմանափակություն զբոսաշրջային ոլորտում</p> <ul style="list-style-type: none"> • Ֆինանսավորման պակաս նոր նախագծերի համար, համագործակցության պակաս մասնավոր սեկտորի հետ:

Հնարավորություններ	Սպառնալիքներ
<p>" Էկոտուրիզմի աճող պահանջարկ</p> <ul style="list-style-type: none"> Միջազգային շուկաներում էկոտուրիզմի նկատմամբ հետաքրքրության աճ, կայուն և պատասխանատու զբոսաշրջային պրակտիկաների ներդրում: <p>" Նոր զբոսաշրջային ուղղությունների և արտադրանքի զարգացում</p> <ul style="list-style-type: none"> Թեմատիկ ուղևորություններ, մշակութային միջոցառումների կազմակերպում: <p>" Համագործակցություն զբոսաշրջային գործակալությունների և օպերատորների հետ</p> <ul style="list-style-type: none"> Փաթեթային առաջարկների ստեղծում՝ ներառելով Վեդին, միջազգային համագործակցության հնարավորություններ: <p>" Կառավարական աջակցություն և ֆինանսավորման հնարավորություններ</p> <ul style="list-style-type: none"> Տարածաշրջանային զարգացման ծրագրեր, դրնոր կազմակերպությունների ակտիվություն: <p>" Ժամանակակից տեխնոլոգիաների ներգրավում</p> <ul style="list-style-type: none"> Բջջային հավելվածների և վիրտուալ շրջագայությունների, թվային մարքեթինգի զարգացում: <p>" Համայնքային զբոսաշրջության զարգացում</p> <ul style="list-style-type: none"> Տեղական համայնքների մասնակցության խթանում, սոցիալական ձեռներեցության նախագծերի աջակցություն: 	<p>" Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն</p> <ul style="list-style-type: none"> Բնապահպանական ռիսկեր՝ էկոհամակարգերի վնասում, աղտոտում; կլիմայական փոփոխությունների ազդեցություն՝ երաշտներ, ջրհեղեղներ և այլն: <p>" Մրցակցության բարձր մակարդակ</p> <ul style="list-style-type: none"> Այլ զբոսաշրջային ուղղությունների զարգացում Հայաստանում և հարևան երկրներում; Միջազգային շուկայում մրցակցային դիրքի դժվարացում: <p>" Տնտեսական անկայունություն</p> <ul style="list-style-type: none"> Ազգային արժույթի տատանումներ; գնաճ և տնտեսական ճգնաժամեր: <p>" (Գեո-)Քաղաքական անկայունություն</p> <ul style="list-style-type: none"> Տարածաշրջանային կոնֆլիկտներ; անվտանգության մտահոգություններ զբոսաշրջիկների համար: <p>" Շրջակա միջավայրի դեգրադացիայի ռիսկեր</p> <ul style="list-style-type: none"> Անպատասխանատու զբոսաշրջային պրակտիկաների կիրառման; բնության հատուկ պահպանվող տարածքների վնասման ռիսկեր: <p>" Գլոբալ գործոններ</p> <ul style="list-style-type: none"> Համավարակներ և առողջապահական ճգնաժամեր; միջազգային տնտեսական ճգնաժամեր:

4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

4.1 Զբոսաշրջության տնտեսական ազդեցությունը

Ընթացիկ ներդրումներ - Զբոսաշրջությունը կարող է կենսական դերակատարություն ունենալ Վեդի համայնքի տնտեսության մեջ՝ զգալիորեն նպաստելով տեղական ՀՆԱ-ի բարձրացմանը և ապահովելով զբաղվածության հնարավորություններ: Զբոսաշրջությունը կարող է աջակցել ծառայությունների և դրանց հետ համակցվող տարբեր ոլորտներին, ներառյալ հյուրընկալությունը, մանրածախ առևտուրը և տրանսպորտը՝ եկամտի լրացուցիչ հնարավորություններ ստեղծելով ուղղակի և անուղղակի տնտեսական հետևանքների միջոցով: Զբոսաշրջիկների հարաճուն այցելություններից համայնքում կակտիվանան ներդրումները, ինչը կնպաստի հանրային ենթակառուցվածքների բարելավմանն ու տեղացիների կյանքի որակի բարձրացմանը:

Պոտենցիալ աճ - Կանխատեսումները ցույց են տալիս, որ զբոսաշրջությունը կարող է առաջիկա հինգ տարիների ընթացքում Վեդիի ՀՆԱ-ն ավելացնել շուրջ 15%-ով:

Վեդիի զբոսաշրջության զարգացման ծրագիրը հստակ տեսլական է սահմանում տարածաշրջանը ներքոնշյալ զբոսաշրջության ուղղությունների համար նպաստավոր վայր, դրանք են՝

- Էկոզբոսաշրջություն,
- Պատմամշակութային զբոսաշրջություն,
- Արկածային զբոսաշրջություն
- Գաստրո – զբոսաշրջություն
- Ագրոզբոսաշրջություն:

Օգտագործելով իր բնական գեղեցկությունը, հարուստ մշակութային ժառանգությունը և կայունությանը նվիրվածությունը, նաև խաղողագործությունը՝ Վեդին կարող է գրավել այցելուների բազմազան խմբեր և զգալի տնտեսական օգուտներ առաջացնել համայնքի և բնակավայրերի համար:

Այս հետազոտությունը ուրվագծում է ռազմավարական նախաձեռնությունները, ենթակառուցվածքների բարելավումները և համագործակցային գործընկերությունը, որոնք անհրաժեշտ են այդ նպատակներին հասնելու համար:

Իրականացնելով այս համապարփակ ճանապարհային քարտեզը՝ Վեդին կիրացնի իր ողջ ներուժը՝ որպես զբոսաշրջության զարգացող այցելավայր, որը տարբերվում է իր յուրահատուկ ինքնությամբ և պահպանում է իր բացառիկ, թանկարժեք ռեսուրսները ապագա սերունդների ժառանգման համար:

ՎԵԴԻԻ ՄՇԱԿՈՒԹՅԱԻՆ ԵՎ ԱՐԿԱԾԱՅԻՆ ԵՐԹՈՒՂԻ

2-օրյա զբոսաշրջային փորձառություն, մշակութային ժառանգության, բնության և արկածների սիրահարների համար

- Տևողությունը – 2 ցերեկ / 1 գիշեր
- Սեզոնային համապատասխանությունը – մայիսից հոկտեմբեր
- Մասնակիցների քանակը – առնվազն 6, առավելագույնը 10
- Ուղեկցորդի կամ գիդ-թարգմանչի անհրաժեշտություն

Օր 1

- Խոր Վիրապ վանք
- Ժամանում Վեդի համայնք
- Տափի բերդ
- Տուշպա գինու մառան (ճաշ)
- Հովհաննես Կարապետ վանք
- Վեդի Ալկո (գինու համտես)
- Գիշերակաց Վեդի համայնքում

Օր 2

- Նախաճաշ գիշերակացի հանգրվանում
- Հրեշտակների ձոր (քայլարշավ)
- «Խոսրովի անտառ» պետական արգելոցում շրջայց (կենդանիների հետքերի, բույսերի դիտարկում)
- Արգելոցում բացօթյա ճաշ (պիկնիկ)
- Արտաճանապարհային մեքենաներով շրջայց Խոսրովից Վեդի
- Մեկնում Վեդի համայնքից

Ընդհանուր նկարագրություն. Այս 2-օրյա զբոսաշրջային երթուղին նախատեսված է Վեդիի լավագույն առանձնահատկությունները ցուցադրելու համար՝ համատեղելով նրա մշակութային ժառանգությունը, բնական գեղեցկությունը և արկածներով լի հիասքանչ լանդշաֆտները: Այս երթուղին լավագույն հնարավորություններն է ներկայացնում այն զբոսաշրջիկների համար, ովքեր փնտրում են հաղորդակցում հայկական մշակութային ժառանգության և արկածների հետ:

Օր 1. Մշակութային և պատմական ճամփորդություն

Խոր Վիրապ վանք (առավոտյան)

- **Տևողությունը՝** 2-3 ժամ
- **Նկարագրություն.** Զբոսաշրջային այս երթուղին մեկնարկում է Խոր Վիրապի վանական համալիրից՝ Հայաստանի ամենանշանավոր կրոնական վայրերից մեկը, որն առաջարկում է հիասքանչ տեսարաններ դեպի Արարատ լեռը և հաղորդակցում Հայաստանի քրիստոնեական ժառանգության հետ:
- **Այցելուների փորձ.** Զբոսավարի ուղեկցությամբ շրջայց մենաստանում և ծանոթություն Սուրբ Գրիգոր Լուսավորչի ժառանգությանը, ինչպես նաև լուսանկարչություն Արարատ լեռան բացառիկ համայնապատկերներին:

Տափի բերդ-ամրոց (կեսօր)

- **Տևողությունը՝** 1-2 ժամ
- **Նկարագրություն.** Երթուղին կշարունակվի դեպի պատմական Տափի բերդ կամ Գևորգ Մարգարետունու ամրոց, որտեղ կարող եք ուսումնասիրել միջնադարյան ամրոցի մնացորդները, որը ժամանակին պաշտպանել է տարածաշրջանը: Բերդը պատկերացումներ է տալիս հայկական միջնադարյան ճարտարապետության և ռազմական կառույցների պատմության մասին:
- **Այցելուների փորձ.** Զբոսավարի ուղեկցությամբ էքսկուրսիա բերդի ավերակներով, ծանոթություն հնագույն մարտերի պատմություններին և լուսանկարչություն շրջակա հիասքանչ լանդշաֆտների տեսարանով:

Ճաշի կանգառ. Տուշպա Գինու Մառան (կեսօր)

- **Նկարագրություն.** Իսկական հայկական խոհանոցը և Վեդիին բնորոշ առանձնահատուկ գինիները համտեսելու տեղական ռեստորանում, որտեղ ճաշատեսակներ են պատրաստվում թարմ, տեղական ծագման բաղադրիչներով, իսկ գինիները իրենց մեջ կրում են դարերի խորքից եկող ժառանգության պատմությունը:
- **Առաջարկվող ուտեստներ.** Խորոված (հայկական խորոված), տոլմա (խաղողի տերևներով) և լավաշ (ավանդական հաց):

Հովհաննես Կարապետ վանք (ուշ կեսօր)

- **Տևողությունը՝** 1-2 ժամ
- **Նկարագրություն.** Այցելություն Հովհաննես Կարապետ վանքը, հոգևոր ապաստարան, որը հայտնի է իր հիասքանչ ճարտարապետությամբ և խաղաղ միջավայրով:

- **Այցելուների փորձ.** Զբոսավարի ուղեկցությամբ էքսկուրսիա վանքի կոթողներով, անձնական մտորումների կամ աղոթքի ժամանակ և լուսանկարչական հնարավորություններ:

Վեդիի տեղական գինեգործական փորձ (Երեկո)

- **Տևողությունը՝** 2-3 ժամ
- **Նկարագրություն.** Երթուղու առաջին օրը կավարտվի այցելելով հայկական գինեգործության բազմադարյան փորձի և ավանդույթների շարունակող տեղական Վեդի Ալկո ձեռնարկություն: Հայկական գինու և ալկոհոլային խմիչքների յուրահատուկ համերը համտեսելու և ավանդական գինեգործության գործընթացին շանթթանալու լավագույն հնարավորություն:
- **Այցելուների փորձ.** Խմիչքների համտես, շրջագայություն ձեռնարկության տարածքում և քննարկումներ տեղի մասնագետների հետ արտադրության պատմության և ապագայի վերաբերյալ:

Երեկոյան հանգիստ.

- **Գիշերակաց.** Գիշերակացը կկազմակերվի Վեդիի հյուրատաներում, որոնք առաջարկում է հարմարավետ կացարան հայկական հյուրընկալության նրբերանգով:

Օր 2. Բնություն և արկածներ

Հրեշտակների ձոր (առավոտյան)

- **Տևողությունը՝** 2-3 ժամ
- **Նկարագրություն.** Այցելության երկրորդ օրը կմեկնարկի գեղատեսիլ քայլարշավով Հրեշտակների ձորով, բնական երկրաբանական կազմավորում, որը հայտնի է իր հիասքանչ լանդշաֆտներով և հանդարտ մթնոլորտով:
- **Այցելուների փորձ.** Ուղեկցությամբ քայլարշավ, բնության լուսանկարչություն և վայրի բնության դիտման հնարավորություններ:

«Խոսրովի անտառ» պետական արգելոցի ուսումնասիրում (ուշ առավոտից մինչև կեսօր)

- **Տևողությունը՝** 3-4 ժամ
- **Նկարագրություն.** «Խոսրովի անտառ» պետական արգելոցը հետազոտելու հնարավորություն, որը կենսաբազմազանության թեժ կետ է և աշխարհի ամենահին պահպանվող տարածքներից մեկը:
- **Այցելուների փորձ.** Վայրի բնության դիտարկում, էկոշրջագայություններ, ինչպես նաև ծանոթություն արգելոցի յուրահատուկ էկոհամակարգերին և դրանց պահպանման ջանքերին:

Ճաշի կանգառ. Պիկնիկի խոսքովի անտառում (կեսօր)

- **Նկարագրություն.** Անտառի անխռով գեղեցկության մեջ խնջույք վայելելու հնարավորություն:
- **Այցելուների փորձ.** Պիկնիկի համար առաջարկվող ապրանքներ. թարմ թխած հաց, տեղական պանիրներ, սեզոնային մրգեր և խմորեղեն:

Վերջնական կանգառ. Վեդիի արտաճանապարհային փորձառություն (ուշ կեսօր)

- **Տևողությունը՝** 1-2 ժամ
- **Նկարագրություն.** Երթուղին և ճանապարհորդությունը կավարտվի արտաճանապարհային արկածներով Վեդիի խորդուբորդ տեղանքներով ու լանդշաֆտներով: Կատարյալ է նրանց համար, ովքեր փնտրում են ադրենալինին և անմոռանալի զգացողություններ:
- **Գործունեություն.** 4x4 արտաճանապարհային վարում, լեռնային հեծանվավարություն և Վեդիի լանդշաֆտի պանորամային տեսարանների նկարահանում:

Երեկոյան մեկնում. վերադարձ (երեկոյան)

- **Շրջագայության ավարտ.** Արկածներով և ուսումնասիրություններով լի 2-օրա շրջագայությունից հետո վերադարձ:

Լրացուցիչ տեղեկություններ.

- **Տրանսպորտ.** Ճկունության համար խորհուրդ է տրվում մասնավոր տրանսպորտ: Զբոսավարի ուղեկցությամբ էքսկուրսիաները կարող են առաջարկել տրանսպորտային տարբերակներ՝ որպես փաթեթի մաս:
- **Ինչ վերցնել.** Հարմարավետ արշավային կոշիկներ, արևապաշտպան գլխարկ և քույր, տեսախցիկ, ջուր և խորտիկներ ճանապարհորդության համար:
- **Տեղացի էքսկուրսավարներ.** Խորհուրդ է տրվում վարձել տեղացի էքսկուրսավար՝ արկածային գործունեության ընթացքում պատմական պատկերացումների, մշակութային համատեքստի և պահպանվող գոտում անվտանգության համար:
- **Տեղավորում.** Տարբերակները ներառում են հյուրատներ, հայկական ավանդական կացարաններ և էկո օթյակներ որոնք ապահովում են ջերմ և իսկական փորձ:

ՎԵԴԻԻ ԱՐԿԱԾԱՅԻՆ ԵՐԹՈՒԴԻՆԵՐ

2-օրյա զբոսաշրջային փորձառություն, բնության և արկածների սիրահարների համար

- Տևողությունը – 1,5 ցերեկ / 1 գիշեր
- Սեզոնային համապատասխանությունը – մարտից մայիս և սեպտեմբերից նոյեմբեր
- Մասնակիցների քանակը – առավազն 6, առավելագույնը 10
- Ուղեկցորդի կամ գիդ-թարգմանչի անհրաժեշտություն

Օր 1

- Ժամանում Վեդիի համայնք
- Հրեշտակների ծոր (քայլարշավ)
- «Խոսքովի անտառ» պետական արգելոցում շրջայց (կենդանիների հետքերի, բույսերի դիտարկում)
- Արգելոցում բացօթյա ճաշ (պիկնիկ)
- Արտաճանապարհային մեքենաներով շրջայց համայնքում
- Ընթրիք գյուղական տանը
- Գիշերակաց Վեդիի համայնքում

Օր 2

- Նախաճաշ գիշերակացի հանգրվանում
- Ազատի ջրամբար
- Սապբորդինգ, բայակինգ կամ ձկնորսություն
- Զրամբարի մոտ բացօթյա ճաշ (պիկնիկ)
- Մեկնում Վեդիի համայնքից

Ընդհանուր նկարագրություն. Այս 2-օրյա արկածային երթուղին նախատեսված է արկածներ և ադրենալին փնտրողների համար, ովքեր ցանկանում են զգալ Վեդիի վայրի և խորդուբորդ կողմը: Այս երթուղին ճանապարհորդներին տանում է Վեդիի ամենադժվար և հիասքանչ լանդշաֆտներով, ներառյալ արտաճանապարհային արշավներից մինչև համարձակ ջրային արկածներ Ազատի ապշեցուցիչ ջրամբարում:

Օր 1. Բարձր ադրենալին և ցամաքային արկածներ

Հրեշտակների ծոր (առավոտյան)

- **Տևողությունը՝** 2-3 ժամ
- **Նկարագրություն.** Արկածային երթուղին կմեկնարկի գեղատեսիլ քայլարշավով Հրեշտակների ծորով, բնական երկրաբանական կազմավորում, որը հայտնի է իր հիասքանչ լանդշաֆտներով և հանդարտ մթնոլորտով:
- **Այցելուների փորձ.** Ուղեկցությամբ քայլարշավ, բնության լուսանկարչություն և վայրի բնության դիտարկման հնարավորություններ:

«Խոսքովի անտառ» պետական արգելոցում շրջայց (ուշ առավոտյան)

- **Տևողությունը՝** 3-4 ժամ
- **Նկարագրություն.** Արկածային երթուղին կշարունակվի «Խոսքովի անտառ» պետական արգելոցը հետազոտելու հնարավորությամբ, որը կենսաբազմազանության թեժ կետ է և հանդիսանում է աշխարհի ամենահին պահպանվող տարածքներից մեկը:
- **Այցելուների փորձ.** Վայրի բնության դիտարկում, էկոշրջագայություններ, ինչպես նաև ծանոթություն արգելոցի յուրահատուկ էկոհամակարգերին և դրանց պահպանման ջանքերին:

Ճաշի կանգառ. Պիկնիկ Խոսքովի անտառում (կեսօր)

- **Նկարագրություն.** Անտառի անխռով գեղեցկության մեջ խնջույք վայելելու հնարավորություն:
- **Այցելուների փորձ.** Պիկնիկի համար նախատեսվող սնունդ. թարմ թխած հաց, տեղական պանիրներ, սեզոնային բանջարեղեն, մրգեր և թխուկներ:

Վեդիի արտաճանապարհային փորձառություն (ուշ կեսօր)

- **Տևողությունը՝** 1-2 ժամ
- **Նկարագրություն.** Ճանապարհորդության առաջին օրը կավարտվի արտաճանապարհային արկածներով Վեդիի խորդուբորդ տեղանքներով ու լանշաֆտներով: Կատարյալ է նրանց համար, ովքեր փնտրում են ադրենալինին և անմոռանալի զգացողություններ:
- **Գործունեություն.** 4x4 արտաճանապարհային վարում, լեռնային հեծանվավարություն և Վեդիի լանդշաֆտի պանորամային տեսարանների նկարահանում:

Երեկոյան հանգիստ. Գիշերակացը կկազմակերպվի գյուղական հյուրատանը կամ վրանային ճամբարատեղիում, որտեղ ճանապարհորդները կարող են վայելել խառույկը և կիսվել իրենց տպավորություններով զրուցակիցների հետ:

Օր 2. Զրային արկածներ

Ազատի ջրամբար և ջրային սպորտաձևեր (առավոտյան)

- **Տևողությունը՝** 4-5 ժամ
- **Նկարագրություն.** Երթուղու երկրորդ օրը կմեկնարկի գեղատեսիլ լեռներով շրջապատված Ազատի ջրամբարում: Սա կատարյալ վայր է ջրային մի շարք արկածների համար:
- **Այցելուների փորձ.** Սապերոդինգով, բայակինգով կամ ձկնորսությամբ զբաղվելու հնարավորություն: Իսկապես համարձակների համար ջրամբարի շուրջը եզերող գոգավորություններով պատված վայրերն առաջարկում են ադրենալինով անմոռանալի տպավորություններ:

Ճաշի կանգառ. Պիկնիկ ջրամբարի մոտ (կեսօր)

- **Նկարագրություն.** Ազատի ջրամբարի մոտ տեղական ճաշատեսակները հիասքանչ բնական միջավայրում վայելելու հնարավորություն:
- **Այցելուների փորձ.** Պիկնիկի համար առաջարկվող սնունդ. տեղական թարմ արտադրանք, պանիր, հաց և էներգիայով հագեցած նախուտեստներ:

Կեսօրին մեկնում. վերադարձ

- **Շրջագայության ավարտ.** Արկածներով և հարուստ բնական միջավայրի ուսումնասիրություններով լի 1,5-օրյա շրջագայությունից հետո վերադարձ:

Լրացուցիչ տեղեկություններ.

- **Տրանսպորտ.** արտաճանապարհային հատվածներում առաջարկվում են 4x4 մեքենաներ: Ազատի ջրամբարում ջրային սպորտաձևերով զբաղվելու համար հարկավոր է նախապես պայմանավորվել համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ:
- **Ինչ վերցնել.** արշավային կոշիկներ, լողազգեստ, արևապաշտպան գլխարկ և քսուկ, տեսախցիկ և բարձր էներգիա պարունակող խորտիկներ:
- **Տեղական էքսկուրսավարներ.** Ազատի ջրամբարում արկածային փորձառություններն իրականացվում են միայն մասնագիտացված կազմակերպության ուղեկցորդների մասնակցությամբ՝ հիմնականում անվտանգության ապահովման համար:
Գիշերակաց. Տարբերակները ներառում են գյուղական հյուրատներ և արկածային վայրերի մոտ գտնվող ճամբարատեղիներ՝ ապահովելով իսկական բացօթյա փորձառություն:

Երեկոյան մեկնում. վերադարձ (երեկոյան)

- **Շրջագայության ավարտ.** Արկածներով և ուսումնասիրություններով լի 2-օրյա շրջագայությունից հետո վերադարձ:

Լրացուցիչ տեղեկություններ.

- **Տրանսպորտ.** Ճկունության համար խորհուրդ է տրվում մասնավոր տրանսպորտ: Զբոսավարի ուղեկցությամբ էքսկուրսիաները կարող են առաջարկել տրանսպորտային տարբերակներ՝ որպես փաթեթի մաս:
- **Ինչ վերցնել.** Հարմարավետ արշավային կոշիկներ, արևապաշտպան գլխարկ և քսուք, տեսախցիկ, ջուր և խորտիկներ ճանապարհորդության համար:
- **Տեղացի էքսկուրսավարներ.** Խորհուրդ է տրվում վարձել տեղացի էքսկուրսավար՝ արկածային գործունեության ընթացքում պատմական պատկերացումների, մշակութային համատեքստի և պահպանվող գոտում անվտանգության համար:
- **Տեղավորում.** Տարբերակները ներառում են հյուրատներ, հայկական ավանդական կացարաններ և էկո օթյակներ որոնք ապահովում են ջերմ և իսկական փորձ:

ՎԵԴԻԻ ԷԿՈՏՈՒՐԻԶՄԻ ԵՎ ԱԳՐՈՏՈՒՐԻԶՄԻ ԵՐԹՈՒՂԻ

2-օրյա զբոսաշրջային փորձառություն, բնության, ագրոզբոսաշրջության և խոհանոցի սիրահարների համար

- Տևողությունը – 2 ցերեկ / 1 գիշեր
- Սեզոնային համապատասխանությունը – հունիսից հոկտեմբեր
- Մասնակիցների քանակը – առնվազն 6, առավելագույնը 12
- Ուղեկցորդի կամ զբոսավարի անհրաժեշտություն

Օր 1

- Ժամանում Վեդի համայնք
- «Խոսքովի անտառ» պետական արգելոցում էկո-տուր
- Այցելություն տեղական գյուղատնտեսական ֆերմա
- Ֆերմայում ճաշ
- Խաղողի այգում շրջայց
- Այգում գինու համտես
- Ընթրիք գյուղական տանը
- Գիշերակաց Վեդի համայնքում

Օր 2

- Արևածաղի դիմավորում Ազատի ջրամբարում (նախաճաշ)
- Այցելություն ֆերմերների շուկա
- Տուշպա գինու մառան (ճաշ)
- Այցելություն պտուղների վերամշակման գործարան
- Խոհարարական փորձառություն տեղական ֆերմայում կամ ձեռնարկությունում (համտես)
- Մեկնում Վեդի համայնքից

Ընդհանուր նկարագրություն. Այս 2-օրյա երթուղին կատարյալ է նրանց համար, ովքեր ցանկանում են կապվել բնության հետ, ծանոթանալ կայուն գյուղատնտեսությանը և վայելել Վեդիի իսկական համերը: Համատեղելով էկոտուրիզմն ագրոտուրիզմի և գաստրոտուրիզմի հետ՝ այս շրջագայությունն առաջարկում է տարբերվող հանգիստ, յուրահատուկ փորձառություններ՝ միախառնելով բնության գեղատեսիլ գեղեցկությունը, թարմ տեղական սնունդը և ֆերմերային կյանքը:

Օր 1. Էկոտուրիզմ և արկածներ Ֆերմայում

Խոսքովի անտառ էկո-տուր (առավոտյան)

- **Տևողությունը՝** 3-4 ժամ
- **Նկարագրություն.** Այս երթուղին կմեկնարկի այցելելով «Խոսքովի անտառ» պետական արգելոցից՝ Հայաստանի կարևորագույն պահպանվող տարածքներից մեկից, ինչը հնարավորություն կտա բացահայտել այս հնագույն անտառի անհավատալի կենսաբազմազանությունը:
- **Այցելուների փորձ.** Զբոսավարի ուղեկցությամբ զբոսանք վայրի բնության դիտարկումներով, էկոկրթությամբ և անտառի եզակի բուսական ու կենդանական աշխարհի մասին սովորելու հնարավորությամբ: Այցելությունը հնարավորություն կտա դիտելու և լուսանկարելու թռչուններ, բույսեր և այլն:

Այցելություն տեղական գյուղատնտեսական Ֆերմա (ուշ առավոտ)

- **Տևողությունը՝** 2-3 ժամ
- **Նկարագրություն.** Երթուղին կշարունակվի դեպի տեղական գյուղատնտեսական Ֆերմա, որտեղ ճանապարհորդները կկարողանան անմիջականորեն ծանոթանալ կայուն գյուղատնտեսական պրակտիկաների փորձին:
- **Այցելուների փորձ.** Շրջագայություն Ֆերմայում, այգեգործության, տեղական մշակաբույսերի, գյուղատնտեսության տեխնիկայի մասին սովորելու, ֆերմերների հետ շփվելու և նույնիսկ որոշ թեթև գյուղատնտեսական գործունեության մասնակցելու հնարավորություն, օրինակ՝ մրգերի և բանջարեղենի հավաքում:

Ճաշի կանգառ. Ճաշ Ֆերմայում (կեսօր)

- **Նկարագրություն.** Թարմ, տնական ուտեստներ համտեսելու հնարավորություն, որոնք ամբողջությամբ պատրաստված է Ֆերմայի արտադրանքից: Սա Վեդիի Ֆերմայից դեպի համտեսի սեղան իրական փորձառության հնարավորություն է ընձեռնում:
- **Այցելուների փորձ.** Թարմ աղցաններ, տեղական արտադրության պանիրներ, թխուկներ, տնական ջեմեր և մուրաբաներ:

Շրջայց խաղողի այգում և գինու համտես (ցերեկը)

- **Տևողությունը՝** 2-3 ժամ
- **Նկարագրություն.** Երթուղու շրջանակներում ճաշից հետո այցելություն կկազմակերպվի տեղական խաղողի այգներում, որտեղ զբաղվում են արտադրական և տնայնագործական խաղողագործությամբ:
- **Այցելուների փորձ.** Էքսկուրսիա խաղողի այգում, խաղողի աճեցման պրակտիկաների մասին իրազեկում և տեղական աճեցված խաղողից պատրաստված գինիների ընտրանի համտեսելու հնարավորություն:

Երեկոյան հանգիստ, գիշերակաց. Գիշերակացը կկազմակերպվի էկո-օթյակներում կամ հյուրատաներում, որտեղ զբոսաշրջիկների համար կա համապատասխան հարմարավետություն:

Օր 2. Ագրոտորիզմ և գաստրոտորիզմ

Արևածագ Ազատի ջրամբարում (առավոտյան)

- **Տևողությունը՝** 2-3 ժամ
- **Նկարագրություն.** Երթուղու երկրորդ օրը կմեկնարկի այցով դեպի Ազատի ջրամբար, որտեղ ճանապարհորդները կարող են վայելել խաղաղ առավոտյան լուսաբացը: Այն իդեալական վայր է հանգստի և լուսանկարվելու համար:
- **Այցելուների փորձ.** ջրամբարի մոտ հանգստանալու, թեթև զբոսաշրջային ջրային գործունեություններով զբաղվելու և տարածքի բնական գեղեցկությունը վայելելու հնարավորություն է:

Այցելություն Ֆերմերների շուկա (ուշ առավոտյան)

- **Տևողությունը՝** 1-2 ժամ
- **Նկարագրություն.** Այցելություն դեպի գյուղատնտեսական շուկա որտեղ ճանապարհորդները կարող են տեսնել Վեդիում աճեցված օրգանական արտադրանքի բազմազանությունը: Սա հիանալի հնարավորություն է հանդիպելու տեղի ֆերմերներին և գնելու թարմ արտադրանք:
- **Այցելուների փորձ.** Զբոսնեք շուկայում, թարմ մրգերի, պանիրների, մեղրի համտեսելու և տեղական արտադրության ապրանքներ գնելու հնարավորություն, ինչպիսիք են պահածոները և բուսական թեյերը:

Ճաշի կանգառ. Տուշպա Գինու Մառան (կեսօր)

- **Նկարագրություն.** Իսկական հայկական խոհանոցը և Վեդիին բնորոշ առանձնահատուկ գինիները համտեսելու տեղական ռեստորանում, որտեղ ճաշատեսակներ են պատրաստվում թարմ, տեղական ծագման բաղադրիչներով, իսկ գինիներն իրենց մեջ կրում են դարերի խորքից եկող ժառանգության պատմությունը:
- **Առաջարկվող ուտեստներ.** Խորոված, տոլմա (խաղողի տերևներով), նախուտեստներ, անուշահամ բանջարեղեններով տաք ուտեստներ, լավաշ (ավանդական հաց) և ընմեղիքներ, քաղցրավենիքներ:

Խոհարարական սեմինար տեղական ֆերմայում կամ ձեռնարկությունում (ուշ կեսօր)

- **Տևողությունը՝** 2-3 ժամ
- **Նկարագրություն.** Տեղական ֆերմայում կամ ձեռնարկությունում անցկացվող խոհարարական սեմինարի մասնակցելու հնարավորություն, որտեղ ճանապարհորդները կարող են սովորել պատրաստել հայկական ավանդական ուտեստներ՝ օգտագործելով ֆերմայից հավաքված բաղադրիչները:
- **Այցելուների փորձ.** ավանդական թոնրի ջեռոցում լավաշ թխելու, հայկական պանիր պատրաստելու և համտեսի հնարավորություն: Այս ինտերակտիվ փորձը կատարյալ է սննդի սիրահարների համար, ովքեր ցանկանում են կապ հաստատել Վեդիի գաստրոնոմիական սովորույթների և ժառանգության հետ:

Երեկոյան մեկնում. վերադարձ

- **Շրջագայության ավարտ.** Արկածներով և ուսումնասիրություններով լի երկօրյա շրջագայությունից հետո վերադարձ:

Լրացուցիչ տեղեկություններ.

- **Տրանսպորտ.** Ճկունության համար խորհուրդ է տրվում մասնավոր տրանսպորտ: Զբոսավարային էքսկուրսիաները կարող են առաջարկել տրանսպորտային տարբերակներ՝ որպես փաթեթի մաս:
- **Ինչ վերցնել.** Հարմարավետ կոշիկներ, բազմակի օգտագործման ջրի շշեր, արևապաշտպան գլխարկ և քսուք, տեսախցիկ՝ լուսանկարելու համար:
- **Տեղական էքսկուրսավարներ.** Էկո-տուրիզմի և խոհարարական ժառանգության ոլորտում մասնագիտացած էքսկուրսավար զբոսավարները խորհուրդ են տրվում իրական փորձի ապահովման համար:
- **Գիշերակաց** Տարբերակները ներառում են էկո-օթյակներ, ֆերմերային կացարաններ կամ տեղական հյուրատներ, որոնք առաջարկում են հարմարավետ հանգիստ:

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆԿ՝ ՎԵԴԻԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ԲՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ.

հհ	Անուն	Գտնվելու վայրը (վայրը, համայնքը)	Կատեգորիա	Ազդեցության մակարդակ
1	Արարատի ոսկու կորզման գործարան (Գեոպրոմայնինգ Գոլդ)	գ. Արարատ	Հանքարդյունաբերություն	Բարձր
2	Արարատի ցեմենտի գործարան (Արարատցեմենտ)	Արարատ	Շինանյութի արտադրություն	Բարձր
3	«Կավաշեն» ՍՊԸ	Արարատ	Շինանյութի՝ ասբոշիֆորի արտադրություն	Միջին
4	Արարատի կրաքարի հանքավայր	Արարատ	Հանքարդյունաբերություն	Միջին
5	ԱրարատՇին ՍՊԸ	Արարատ	Շինանյութերի արտադրություն	Միջին
6	«Արտֆուդ» Արտաշատի պահածոների գործարան	Արտաշատ	Սննդի վերամշակում	Ցածր
7	«Մասիս Տոբակո» ընկերություն	Մասիս	Ծխախոտի արտադրություն	Ցածր
8	«ՏՐԱՎԵՐՏԻՆ» քարի վերամշակման գործարան	Վեդի	Շինանյութեր	Ցածր
9	Այգեգարդի գինու գործարան	Արտաշատ	Ալկոհոլային ըմպելիքների արտադրություն	Ցածր
10	Ավշարի գինու գործարան	Ավշար	Ալկոհոլային ըմպելիքների արտադրություն	Ցածր
11	Արտաշատյան կաթնամթերք ՍՊԸ	Քաղցրաշեն	Սննդի վերամշակում	Ցածր
12	Արտաշատի մետաքսի կոմբինատ	Արտաշատ	Տեքստիլ	Ցածր
13	Արտաշատի Վին-Կոն գինու/կոնյակի գործարան	Արտաշատ	Ալկոհոլային ըմպելիքների արտադրություն	Ցածր
14	Գոռավանի կաթնամթերքի գործարան	Գոռավան	Սննդի վերամշակում	Ցածր

15	Երասխի գինու գործարան	Երասխ	Ըմպելիքների արտադրություն	Ցածր
16	ՄԱՊ պահածոների գործարան	Արտաշատ	Մենդի վերամշակում	Ցածր
17	Մասիս Գարուն ջերմոցային համալիր	Մասիս	Գյուղատնտեսություն	Ցածր
18	Մասիսի թռչնաֆաբրիկա	Մասիս	Գյուղատնտեսություն	Ցածր
19	Ուրցաձորի հանքային ջրերի գործարան	Ուրցաձոր	Ըմպելիքների արտադրություն	Ցածր
20	Սուրենավանի բազալտի կոմբինատ	Սուրենավան	Շինանյութեր	Ցածր
21	Սուրենավանի քարի գործարան («Մանանա Սթոուն»)	Սուրենավան	Շինանյութեր	Ցածր
22	Վեդի Ալկո գինու/օղու գործարան	Վեդի	Ալկոհոլային ըմպելիքների արտադրություն	Ցածր
23	Արարատի գինու գործարան	Արարատ	Ալկոհոլային ըմպելիքների արտադրություն	Ցածր
24	«Ավշար պրոդ» ՍՊԸ	Ավշար	Մենդի վերամշակում	Ցածր
25	Արարատի Աբրիկոն ՍՊԸ	գ. Արարատ	Ալկոհոլային ըմպելիքների արտադրություն	Ցածր
26	«ՏԱՎԻՆԿՈ» գինու և կոնյակի գործարան	գ. Տափերական	Ալկոհոլային ըմպելիքների արտադրություն	Ցածր
27	Տուշպա գինու գործարան (Վան-777 ՍՊԸ)	գ. Տափերական	Ալկոհոլային ըմպելիքների արտադրություն	Ցածր

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԼԱՎ ՊՐԱԿՏԻԿԱՆԵՐ
ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՕՐԻՆԱԿ**

Հետագա զարգացման ընթացքում՝ խորհուրդ է տրվում մշակել խթանվող տնտեսական օբյեկտներում կիրառվելիք պրակտիկաների նմանատիպ օրինակներ և իրականացնել դրանց տարածումը՝ դասընթացների և այլ միջոցառումների միջոցով; նաև դրանց ապահովման համար մշակել մեխանիզմ՝ հավաստագրման և մշտադիտարկման համար:

Աղյուսակում կանաչ գույնով արտահայտված են բնապահպանական լավ պրակտիկաները: Կապույտ գույնով արտահայտված են սոցիալական լավ պրակտիկաները, նրանք կարող են օգտագործվել որպես վաճառքի յուրահատուկ կետեր (USP) օբյեկտների կողմից իրենց ծառայությունները գովազդելու ժամանակ:

Հյուրանոց/հյուրատուն/B&B⁸, սննդի օբյեկտների համար

Ջրամատակարարման համակարգ	<p>ա. Ազգային որակի չափանիշներին համապատասխան խմելու ջրի առկայություն: Այն բնակավայրերում, որտեղ չկա խմելու ջրի մատակարարում, ցանկալի է, որ տրամադրվի շալցված ջուր:</p> <p>բ. Տաք ջրի առկայություն (խորհուրդ է տրվում օգտագործել արևային ջրատաքացուցիչներ):</p> <p>գ. Այն բնակավայրերում, որտեղ ջրամատակարարումը իրականացվում է ծափանդանքներով խորհուրդ է տրվում տեղադրել նաև անձրևաջրերի կուտակման համակարգեր⁹:</p>
Օդափոխման համակարգ	<p>ա. Խորհուրդ է տրվում ընդհանուր տարածքներում և սենյակներում ունենալ ավտոմատ կամ մեխանիկական օդափոխման սարքավորումներ</p> <p>բ. Սննդի պատրաստման վայրում (խոհանոցում) խորհուրդ է տրվում ունենալ օդափոխության պատշաճ համակարգ</p> <p>գ. Սարքավորումների շահագործումը պետք է բացառի օդի աղտոտումը վնասակար նյութերով</p>
Թափոնների կառավարում	<p>ա. Աղբահանության համար նախատեսված տարաները պետք է ունենան կափարիչ և տեղակայված լինեն տարածքի տնտեսական հատվածում՝ հյուրերի/ հաճախորդների համար հասանելի մասից առանձին:</p> <p>բ. Աղբահանությունից հետո տարաները խորհուրդ է տրվում է լվանալ և ախտահանել համապատասխան նյութերով:</p> <p>դ. Խորհուրդ է տրվում կիրառել թափոնների առանձին հավաքման պրակտիկա¹⁰</p> <p>ե. Այն տարածքներում, որտեղ չկա կոյուղի, խորհուրդ է տրվում օգտագործել սեպտիկ հորեր¹¹:</p>
Վնասատուների դեմ	ա. Ճանճերի, մոծակների և այլ միջատների դեմ պայքարը հեշտացնելու

⁸ B&B = Bed and Breakfast – Մահճակալ և նախաճաշ առաջարկը:

⁹ <https://shorturl.at/P5ALl>

¹⁰ https://teh-eco.com/o_kompanii/staty/razdelniy-sbor-musora/

¹¹ <https://www.youtube.com/watch?v=2FPr0yTq5PQ>

պայքար	<p>նպատակով խորհուրդ է տրվում օբյեկտի բոլոր դռներն ու պատուհանները համալրել հակամիջատային ցանցերով:</p> <p>բ. Սեզոնային հաստատություններում ախտահանման և դերատիզացիայի աշխատանքները խորհուրդ է տրվում կատարել տարին առնվազն մեկ անգամ, իսկ մյուսներում՝ տարին երկու անգամ:</p>
Մաքրման աշխատանքներ	<p>ա. Մաքրման պարագաները պետք է պահվեն առանձին, խորհուրդ է տրվում օգտագործել էկո/բիո/բնական մաքրող միջոցներ¹²,</p> <p>բ. Օբյեկտներ սենյակները խորհուրդ է տրվում մաքրել ամեն օր (եթե օգտագործվում են) և ընդհանրապես ամիսը մեկ անգամ,</p> <p>գ. Յուրաքանչյուր զուգարանի կողքին պետք է տեղադրվի մաքրող խոզանակ,</p> <p>դ. Անկողնային սպիտակեղենը պետք է փոխել յուրաքանչյուր հյուրի մեկնումից հետո, իսկ երկարաժամկետ մնացող հյուրերի դեպքում իրենց սպիտակեղենը թարմացնել ամենաուշը 2-3 օրը մեկ,</p> <p>ե. Խորհուրդ է տրվում ունենալ լվացքատան ծառայություն օբյեկտում՝ հյուրերին առաջարկելու համար,</p> <p>զ. Ջուգարանների, խոհանոցների, ճաշասենյակների և հանգստի գոտիների ախտահանումը պետք է իրականացվի ամեն օր:</p> <p>է. Խորհուրդ է տրվում, որ զուգարաններում լինեն մաքրման հերթափոխի գրառումներ¹³</p>
Սննդի անվտանգություն ¹⁴	<p>ա. Հաստատությունը պետք է համապատասխանի հանրակացարանի/ B&B/ հյուրատան համար անվտանգության և հիգիենայի ազգային պահանջներին¹⁵</p> <p>բ. Խորհուրդ է տրվում, որ հում, կիսապատրաստ և պատրաստի արտադրանքը պահվի առանձին սառնարաններում/պահեստավորում</p> <p>գ. Արտադրության սեղանները, սարքավորումները և լվացարանները պետք է մաքրվեն լվացող միջոցներով և լվացվեն տաք ջրով</p> <p>դ. Խորհուրդ է տրվում ունենալ առանձին դանակներ և տախտակներ ըստ մշակվող արտադրանքի՝ միս/մսամթերք, պտուղ-բանջարեղեն, հացաբույկեղեն և այլն:</p>
Անվտանգության համակարգեր և առաջին օգնություն	<p>ա. Տարածքը պետք է հագեցված լինի հակահրդեհային ազդանշանային և գործող կրակմարիչներով, ինչպես պահանջվում է ՀՀ օրենսդրությամբ,</p> <p>բ. Տարածքը պետք է ունենա արտակարգ տարահանման սխեմա,</p> <p>գ. Սարքավորումների շահագործումը պետք է իրականացվի անվտանգության կանոնների պահպանմամբ, որոնց վերաբերյալ սարքավորումներին պետք է կցվեն համապատասխան հրահանգներ/նշումներ,</p> <p>դ. Խորհուրդ է տրվում ապահովել օբյեկտը անվտանգ էլեկտրական լարերով: Բաց լարերի առկայությունը բացառել,</p> <p>ե. Խորհուրդ է տրվում օբյեկտում ունենալ առաջին օգնության հավաքածու</p> <p>զ. Տարածքը պետք է հագեցած լինի բնական գազի արտահոսքի աշխատող դետեկտորներով</p>
Անձնակազմի հիգիենայի պահանջները	<p>ա. Աշխատակիցներին անհրաժեշտության դեպքում պետք է տրամադրվի է մաքուր հագուստ/համազգեստ</p> <p>բ. Աշխատակիցների առողջական վիճակը ՀՀ օրենսդրության համաձայն ենթակա է պարբերական ստուգումների</p>

¹² Օրինակ՝ <https://greenday.am/?lang=am>

¹³ <https://zakonbiznesa.ru/blanks/grafik-uborki-tualetov>

¹⁴ <https://snund.am/hy/page/food-safety/71>

¹⁵ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=64659>, <https://shorturl.at/vLKOF>

Անվտանգության կանոններ հատուկ իրավիճակներում (Օր. համաճարագային)	ա. Ապահովել աշխատանքային պայմանները, որոնք համապատասխանում են ՀՀ օրենսդրությամբ և հատուկ իրավիճակով պայմանավորված առողջության և անվտանգության չափանիշներին (Օր. դիմակ, ձեռնոց, ախտահանող միջոց և այլն):
------------------------------------------------------------------	---------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Թափոնների կառավարում	<p>ա. Խորհուրդ է տրվում նվազագույնի հասցնել թափոնների կուտակումը և հնարավորինս վերամշակել կամ վերօգտագործել թափոնները: Օրգանական թափոնների շատ տեսակներ կարող են օգտագործվել կենդանիների կերակրման համար անմիջապես կամ կոմպոստացումից հետո,</p> <p>բ. Խորհուրդ է տրվում կանխարգելել անասնաբուծության և կաթնամթերքի արտադրությունից հեղուկ թափոնների ուղղակի արտահոսքը՝ հնարավորինս օգտագործելով նրանք օրինակ որպես պարարտանյութ,</p> <p>գ. Օրգանական թափոնները չպետք է կուտակվեն մոտակայքում և պահվեն ջրային ռեսուրսների անմիջական հարևանությամբ,</p> <p>դ. Խորհուրդ է տրվում հնարավորինս օգտագործել գոմաղբը՝ որպես օրգանական պարարտանյութ,</p> <p>ե. Խորհուրդ է տրվում թույլ չտալ կենդանիների դիակների և մարմնի մասերի ազատ թափելը և բացօթյա այրումը:</p>
----------------------	-----------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------

«ԿԱՆԱԶ» ՕՐԱԿԱՐԳԻ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑՈՒՑԱԿ

Կազմակերպություն/Հիմնադրամ	Ոլորտ	Նախագծեր/Ծրագրեր	Հղումներ
Հայաստանի վերականգնվող էներգետիկ ռեսուրսների և էներգաարդյունավետության հիմնադրամ (R2E2)	Վերականգնվող էներգիա, էներգաարդյունավետություն	Իրականացնում է նախագծեր՝ վերականգնվող էներգիայի (օրինակ՝ արեգակնային) զարգացման, հասարակական շենքերում էներգաարդյունավետության և թափոնների վերամշակման ոլորտում:	R2E2 Fund
ՄԱԿ-ի Զարգացման Ծրագիր (ՄԱԶԾ) Հայաստան	Կայուն զարգացում, կլիմայի փոփոխություն, էներգաարդյունավետություն	«Էներգաարդյունավետության ներդրումների ընդլայնումը շենքերում» ծրագիրը, Կլիմայի փոփոխության ծրագիր և Բազմազանության ու Հողի դեգրադացման նախագծեր:	ՄԱԶԾ Հայաստան
ԵՄ Կանաչ Գյուղատնտեսական Նախաձեռնություն Հայաստանում (EU-GAIA)	Կայուն գյուղատնտեսություն, օրգանական գյուղատնտեսություն	Աջակցում է կայուն գյուղատնտեսության զարգացմանը օրգանական ֆերմերության, գյուղական զարգացման և էկոլոգիապես մաքուր գյուղատնտեսական արակտիկանների միջոցով:	EU-GAIA
Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերություն (GIZ) Հայաստան	Կայուն զարգացում, էներգիա, շրջանաձև տնտեսություն	«Մասնավոր հատվածի զարգացում և մասնագիտական կրթություն և ուսուցում» ծրագիր կայուն արդյունաբերության, վերականգնվող էներգիայի և վերամշակման նախաձեռնությունների համար:	GIZ Հայաստան
WWF Հայաստան	Շրջակա միջավայրի պաշտպանություն, կենսաբազմազանություն, կլիմայի ադապտացիա	Նախագծեր՝ անտառների պահպանման, կենսաբազմազանության պաշտպանության և էկոլոգիապես մաքուր հողագործական արակտիկանների խթանման համար:	WWF Հայաստան
Կովկասյան Բնության Հիմնադրամ (CNF)	Պահպանություն, կայուն տուրիզմ	Կատարում է երկարաժամկետ ֆինանսավորում՝ պաշտպանվող տարածքների համար, պահպանության և էկոտուրիզմի զարգացման համար:	CNF
Վայրի Բնության և Մշակութային Արժեքների Պահպանման Հիմնադրամ (FPWC)	Վայրի բնության պահպանում, վերականգնվող էներգիա, էկո-կրթություն	Իրականացնում է արևային պանելների նախագծեր գյուղական համայնքներում, պահպանության և էկո-կրթության նախագծեր «Արևի Երեխա» էկո-կենտրոնի միջոցով:	FPWC
EU4Environment	Շրջանաձև տնտեսություն, կանաչ տնտեսություն, կայուն արտադրություն	Աջակցում է շրջանաձև տնտեսության արակտիկանների, ռեսուրսների արդյունավետության և էկո-նորարարության զարգացմանը արդյունաբերական ոլորտներում:	EU4Environment
Ամերիկյան Համալսարանի Ակոսյան Շրջակա Միջավայրի Կենտրոն	Շրջակա միջավայրի հետազոտություն, քաղաքականություն, կայունության կրթություն	Կենտրոնանում է կայուն զարգացման, վերականգնվող էներգիայի և շրջակա միջավայրի քաղաքականության հետազոտության վրա:	Ակոսյան Կենտրոն
Կանաչ Կլիմայական Հիմնադրամ (GCF)	Կլիմայի փոփոխության մեղմացում և ադապտացում, վերականգնվող էներգիա	Հայաստանը հանդիսանում է գործընկերակիր՝ կանաչ էներգիայի, կայուն գյուղատնտեսության և կլիմայի փոփոխության ազդեցություններին դիմակայելու ծնավորելու նախագծերով:	Կանաչ Կլիմայական Հիմնադրամ
ԱՄՆ ՄԶԳ (USAID) Հայաստան	Շրջակա միջավայր, էներգիա, կայուն գյուղատնտեսություն	Աջակցում է վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետության և կայուն գյուղատնտեսական արակտիկանների զարգացմանը տարբեր ծրագրերի	USAID Հայաստան

		միջոցով:	
Շրջակա Միջավայրի Նախարարության Շրջակա Միջավայրի Ներդրումային Ծրագրերի Կառավարման Գործակալություն (EPIU)	Կլիմայի փոփոխություն, թափոնների կառավարում, կենսաբազմազանություն	Հսկում է կլիմայի աղապատացիայի, պինդ թափոնների կառավարման և բնության պահպանության նախագծերը, որոնք աջակցվում են միջազգային ֆոնդերով:	EPIU Հայաստան
Հայաստանի Էներգիայի Խնայողության Հիմնադրամ (ESFA)	Էներգաարդյունավետություն, վերականգնվող էներգիա	Կենտրոնանում է էներգախնայող տեխնոլոգիաների, էներգետիկ աուդիտների և շենքերում էներգաարդյունավետության բարելավման վրա:	ESFA
Հայաստանի Շրջակա Միջավայրի Ցանց (AEN)	Շրջակա միջավայրի պաշտպանություն, կրթություն, քաղաքականություն	Կենտրոնանում է էկոլոգիական կազմակերպությունների կապերի ստեղծման, կանաչ նախաձեռնությունների խթանման և կայունության վերաբերյալ կրթության վրա:	AEN
Global Environment Facility (GEF)	Կլիմայի փոփոխություն, կենսաբազմազանություն, աղտոտման կանխարգելում	Աջակցում է բազմաթիվ ծրագրերին՝ կապված կլիմայի փոփոխության մեղմացման, կենսաբազմազանության պաշտպանության և թափոնների նվազեցման հետ: Հայաստանում ֆինանսավորվում են կենսաբազմազանության և բնապահպանական նախագծեր:	GEF
European Bank for Reconstruction and Development (EBRD)	Կայուն էներգետիկա, շրջակա միջավայրի բարեփոխումներ	Հայաստանում աջակցում է էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի նախագծերին, մասնավոր հատվածի զարգացմամբ և կանաչ տնտեսությամբ:	EBRD
Climate Investment Funds (CIF)	Կլիմայի փոփոխություն, էներգետիկա, կենսաբազմազանություն	Աջակցում է կայուն էներգիայի, կլիմայի փոփոխության մեղմացման և կենսաբազմազանության պահպանման ուղղությամբ միջազգային ծրագրերին: Հայաստանում ծրագրեր կան վերականգնվող էներգիայի և ջրի ռեսուրսների կառավարման ոլորտներում:	CIF
Norwegian Agency for Development Cooperation (NORAD)	Կայուն զարգացում, շրջակա միջավայրի պաշտպանություն	Աջակցում է շրջակա միջավայրի պաշտպանության և կայուն զարգացման ծրագրերին զարգացող երկրներում, ներառյալ Հայաստանում:	NORAD
Swedish International Development Cooperation Agency (SIDA)	Կայուն զարգացում, շրջակա միջավայր, սոցիալական փոփոխություն	Աջակցում է կայուն զարգացման և շրջակա միջավայրի պաշտպանության ծրագրերին Հայաստանում՝ ներառյալ կլիմայի փոփոխության մեղմացման և վերականգնվող էներգիայի ոլորտները:	SIDA
Green Growth Fund	Շրջանաձև տնտեսություն, կայուն աճ, էներգաարդյունավետություն	Օգտագործվում է շրջանաձև տնտեսության զարգացման, էներգախնայողության և կայուն աճի խթանման համար: Հայաստանում աջակցում է մասնավոր սեկտորին՝ ներդրումների համար:	Green Growth Fund
Global Climate Partnership Fund (GCPF)	Կայուն էներգիա, էներգաարդյունավետություն	Միջազգային ֆոնդ, որը նպատակ ունի ֆինանսավորել էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի նախագծերը մասնավոր սեկտորում, ներառյալ Հայաստանում:	GCPF
European Investment Bank (EIB)	Կայուն էներգետիկա, շրջակա միջավայրի բարեփոխումներ	Աջակցում է Հայաստանում կայուն զարգացման ծրագրերին, ներառյալ վերականգնվող էներգիայի, էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի բարեփոխումների նախագծեր:	EIB

The World Bank Group (WBG)	Կայուն զարգացում, կլիմայի փոփոխություն, վերականգնվող էներգիա	Աջակցում է ծրագրերին կլիմայի փոփոխության մեղմացման, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի ոլորտներում՝ Հայաստանում զարգացման ծրագրերի միջոցով:	The World Bank
The Clean Technology Fund (CTF)	Կլիմայի փոփոխություն, մաքուր էներգիա	Կենտրոնանում է կլիմայի փոփոխության մեղմացման և վերականգնվող էներգիայի նախագծերի վրա: Հայաստանում աջակցում է էներգաարդյունավետության նախագծերին:	CTF
UN Environment Programme (UNEP)	Կայուն զարգացում, կլիմայի փոփոխություն, շրջանաձև տնտեսություն	Աջակցում է Հայաստանի կառավարությանը՝ կլիմայի փոփոխության, կայուն արտադրության և շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտներում:	UNEP
Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դեսպանատուն Հայաստանում	Կայուն զարգացում, վերականգնվող էներգիա, շրջակա միջավայր	Գերմանիայի միջազգային համագործակցության (GIZ) և KfW բանկի հետ համատեղ աջակցում է էներգաարդյունավետության, վերականգնվող էներգիայի և շրջակա միջավայրի պահպանության նախագծերին:	https://erivan.diplo.de/am-hy
Ճապոնիայի Դեսպանատուն Հայաստանում	Տեխնոլոգիական զարգացում, աղետների կանխարգելում, կլիմայի փոփոխություն	Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալությունը (JICA) աջակցում է կլիմայի փոփոխության մեղմացման, աղետների կանխարգելման, և շրջակա միջավայրի բարելավման ոլորտներում:	https://www.am.emb-japan.go.jp/itprtop_am/index.html
Ֆրանսիայի Դեսպանատուն Հայաստանում	Շրջակա միջավայրի պաշտպանություն, վերականգնվող էներգիա	Աջակցում է վերականգնվող էներգիայի և շրջակա միջավայրի պահպանության նախագծերին, ինչպես նաև համագործակցում է AFD-ի (Ֆրանսիայի զարգացման գործակալության) միջոցով:	https://am.ambafrance.org/-/%D5%8E%D4%BB%D4%B6%D4%B1-
Շվեդիայի Դեսպանատուն Հայաստանում	Կայուն զարգացում, էներգաարդյունավետություն, սոցիալական զարգացում	Աջակցում է շրջակա միջավայրի պաշտպանության, կլիմայի փոփոխության մեղմացման և էներգաարդյունավետության ծրագրերին SIDA-ի (Շվեդիայի միջազգային համագործակցության գործակալություն) միջոցով:	https://www.swedenabroad.se/hy/embassies/armenien-jerevan/
Նիդերլանդների Դեսպանատուն Հայաստանում	Շրջանաձև տնտեսություն, կայուն զարգացում	Աջակցում է Հայաստանում շրջանաձև տնտեսության զարգացմանը՝ համատեղելով տնտեսական և շրջակա միջավայրի պահպանության շահերը: Աջակցում է կլիմայի փոփոխության ծրագրերին:	https://www.embassy.am/am/embassy-of-netherlands-in-armenia
Մեծ Բրիտանիայի Դեսպանատուն Հայաստանում	Կայուն զարգացում, կլիմայի փոփոխություն, վերականգնվող էներգիա	Աջակցում է կլիմայի փոփոխության մեղմացման, շրջակա միջավայրի պահպանության և վերականգնվող էներգիայի ոլորտներում, ներառյալ բնապահպանական կրթության ծրագրեր:	https://www.gov.uk/world/organisations/british-embassy-yerevan.hy
ԱՄՆ Դեսպանատուն Հայաստանում	Կայուն էներգիա, շրջակա միջավայրի պաշտպանություն	USAID-ի միջոցով աջակցում է վերականգնվող էներգիայի, շրջակա միջավայրի պահպանության և գյուղական զարգացումների ծրագրերին Հայաստանում:	https://am.usembassy.gov/hy/
Նորվեգիայի Թագավորության Դեսպանատուն	Շրջակա միջավայր, էներգետիկա	Աջակցում է կլիմայի փոփոխության մեղմացման, էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի նախագծերին՝ NORAD-ի միջոցով:	https://www.embassy.am/am/of-fice-of-the-honorary-consul-of-the-kingdom-of-norway-in-armenia